*ՆԱԽԱԳԻԾ*

21.07.2009

Հայաստանի Հանրապետության օրենքը

«Կուտակային կենսաթոշակների մասին»

## Գլուխ 1

## Ընդհանուր դրույթներ

Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեության ընթացքում կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում պետական կենսաթոշակից զատ եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է՝ ապահովելով կատարված վճարների և ստացվող կենսաթոշակի միջև ուղղակի կապը, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով վճար կատարողին ազդել կուտակային կենսաթոշակների չափի վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով ընտրելով իր կուտակած միջոցները կառավարող անձին և այդ միջոցների կառավարման քաղաքականությունը:

### Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի կառուցվածքը, կուտակային բաղադրիչի կառավարման գործընթացը և դրա կառավարմանը ներգրավված պետական մարմինների լիազորությունները, ինչպես նաև մասնակիցների ռեեստրը վարողի, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների, կենսաթոշակային ֆոնդի պահառուի գործառույթները, պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր և կամավորության սկզբունքով միանալու իրավունք ունեցող ֆիզիկական անձանց շրջանակը, կուտակային բաղադրիչին մասնակիցների իրավունքները և պարտականությունները, կենսաթոշակային կուտակային հաշիվների վարումը և կուտակային միջոցների ներդրումը, կուտակային կենսաթոշակների տեսակները և դրանց վճարումը, պատասխանատվությունը սույն օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և այլ իրավական ակտերի պահանջների խախտման համար, ինչպես նաև կարգավորում է կուտակային կենսաթոշակների հետ կապված այլ հարաբերությունները:

### Հոդված 2. Օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքի իմաստով օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

**Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ**՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան կենսաթոշակային ֆոնդի կառավարման իրավունք ունեցող իրավաբանական անձ,

**Անհատական (անձնավորված) հաշվառում**՝ հաշվառում, որը արտացոլում է անձանց կատարված կուտակային վճարումների անձնավորված տեղեկատվություն, ըստ «Անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

**Կենսաթոշակային հաշիվ**՝ մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացված անհատական կենսաթոշակային հաշիվ, որին մուտքագրվում են մասնակցի կուտակային վճարները և դրանց ներդրումից ստացված եկամուտները,

**Անհատ ձեռնարկատեր**՝ ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

**Անուիտետ** ՝ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մինչև անձի կյանքի վերջը տրամադրվող ամսական վճար, որը վճարվում է ապահովագրական ընկերության կողմից՝ կուտակված կենսաթոշակային ակտիվները ապահովագրական ընկերությանը պայմանագրի հիման վրա միանվագ փոխանցելու դիմաց: Այս վճարները կարող են լինել ժամանակի ընթացքում հավասար կամ աճող,

**Ապահովագրական ընկերություն**՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

**Ինքնազբաղված անձ**՝ օրենքով չարգելված որևէ գործունեությունից պարբերական եկամուտ ստացող ֆիզիկական անձ, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր, «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արտոնագրային վճար վճարող,

**Կամուրջ հաշիվ**՝ Հայաստանի Հանրապետության Ֆինանսական ոլորտի պետական լիազոր մարմնում բացված հատուկ գանձապետական

հաշիվ, որին մուտքագրվում են կուտակային վճարները՝ հետագայում մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու նպատակով,

**Պարտադիր կուտակային կենսաթոշակ**՝ մասնակցի և/կամ պետության կողմից կուտակային վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին վճարվող կենսաթոշակ, որը տրամադրվում է մասնակցին սույն օրենքով սահմանված կանոնների համաձայն,

**Բազային եկամուտ**՝ աշխատավարձ ու դրան հավասարեցված միջոցներ, աշխատանքի կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց քաղաքացիաիրավական պայմանագրերից և ձեռնարկատիրական գործունեությունից ստացված «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկվող եկամուտ,

**Կուտակային վճար**՝ մասնակցի և/կամ պետության կողմից սույն օրենքով սահմանված դրույքաչափերով կատարվող կենսաթոշակային վճար, որը կուտակվում և արտացոլվում է մասնակցի կենսաթոշակային հաշիվներում,

**Կամավոր կուտակային կենսաթոշակ**՝ գործատուների (անհատական և կոլեկտիվ պայմանագրերի շրջանակներում) և ֆիզիկական անձանց կամավոր կուտակային վճարների հիման վրա «Սահմանված կենսաթոշակային վճար», «Սահմանված կենսաթոշակներ» և «Կուտակային կենսաթոշակային ավանդներ» սխեմաներով վճարվող լրացուցիչ կենսաթոշակ

**Կամավոր կենսաթոշակային սխեման**՝ կամավոր կուտակային կենսաթոշակ տրամադրելու նպատակով ներդրումային ֆոնդի, ապահովագրական ընկերության կամ բանկի կողմից սույն օրենքի պահանջներին համապատասխան սահմանված պայմանների և ընթացակարգերի ամբողջություն, որը ներառում է համապատասխանաբար կենսաթոշակային, ապահովագրական կամ ավանդային վճարումների կատարման կարգը, ժամկետը, ինչպես նաև կամավոր (լրացուցիչ) կենսաթոշակների հաշվարկման ու վճարման պայմանները, ժամկետը և կարգը

**«Սահմանված կենսաթոշակային վճար» սխեմա**՝ կուտակային կենսաթոշակային սխեմա, որի դեպքում մասնակիցների համար կատարված կուտակային վճարները հաշվարկվում են իրենց բազային եկամտի որոշակի տոկոսի չափով կամ որևէ այլ կանոնավոր հիմքով և հաշվեգրվում են կենսաթոշակային հաշիվների վրա, իսկ հետագա կենսթոշակը կախված է մասնակցի վճարներից և այդ վճարների ներդրումների եկամտաբերությունից

**«Սահմանված կենսաթոշակներ» սխեմա**՝ կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմա, որի դեպքում ապահովագրական ընկերությունը խոստանում է մասնակցին հստակ չափով կենսաթոշակ, մասնակցի վճարումները կախված են ապահովագրական ընկերության հետ պայմանագրից և կարող են լինել ոչ կանոնավոր, իսկ կենսաթոշակը կախված չէ մասնակիցի ներդրումների եկամտաբերությունից

**Կենսաթոշակային տարիք**՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարիք,

**Կենսաթոշակային գաղտնիք**՝ մասնակցի կատարված կուտակային վճարի, կենսաթոշակային հաշվի, ինչպես նաև կենսաթոշակային հաշվի վերաբերյալ այլ տեղեկությունները, որը մասնակիցը մտադիր է եղել գաղտնի պահել և գործատուն, պետական լիազոր մարմինները, մասնակիցների ռեեստրը վարողը և կենտրոնական բանկը տեղյակ են եղել կամ պարտավոր էին տեղյակ լինել այդ մասին,

**Կուտակային կենսաթոշակային ակտիվներ**՝ մասնակիցների կենսաթոշակային հաշիվներում առկա ֆինանսական միջոցների ամբողջություն, որը ձևավորվում է կուտակային վճարներից և դրանց կառավարումից ստացված եկամուտներից՝ նվազեցրած դրանց կառավարման և կենսաթոշակային հաշիվների վարման վարձավճարները,

**Մասնակից**՝ աշխատանքային պայմանագրով վարձու աշխատող, անհատ ձեռնարկատեր, նոտար, ինքնազբաղված անձ, ով սույն օրենքով սահմանված կարգով պարտադիր կամ կամավոր կերպով միացել է կուտակային բաղադրիչին և կատարում է կուտակային վճարներ,

**Մասնակիցների ռեեստր**՝ մասնակիցների և նրանց կուտակային ակտիվների վերաբերյալ տվյալների միասնական համակարգ: Մասնակիցների ռեեստրում առկա ամբողջ տեղեկատվությունը հանդիսանում է պետության սեփականությունը:

**Մասնակիցների ռեեստրը վարող**՝ սահմանափակ պատասխանատվությամբ և/կամ բաժնետիրական ընկերություն, որը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա վարում է մասնակիցների ռեեստրը, ինչպես նաև իրականացնում է սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ,

**Հաշվի օպերատոր**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կազմակերպություն, որը հանդիսանում է միջնորդ մասնակիցների և մասնակիցների ռեեստրը վարողի միջև և իրականացնում է սույն օրենքով սահմանված մասնակիցների կողմից իրենց կենսաթոշակային հաշիվների հետ գործողություններ իրականացնող,

**Նոտար**՝ ըստ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

**Կենսաթոշակային ֆոնդ**՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

**Ծրագրային վճար**՝ կենսաթոշակային հաշվում կուտակված միջոցների հաշվին ամսական կտրվածքով՝ սահմանված կարգով մասնակցին տրամադրվող գումար,

**Փոխկապակցված անձինք**՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

**Պահառու**՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառություն իրականացնող անձ,

**Սոցիալական քարտ**՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քարտ:

**Հոդված 3. Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչը կարգավորող օրենսդրությունը**

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, այլ օրենքներով և իրավական ակտերով: Այլ օրենքների դրույթները տարածվում են սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների վրա այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:

**Հոդված 4. Կուտակային կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրները**

Կուտակային կենսաթոշակները ֆինանսավորվում են մասնակիցների կուտակային վճարների, պետության կողմից սույն օրենքի համաձայն կատարված վճարների և/կամ դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին:

**Գլուխ 2**

**Մասնակցությունը պարտադիր կուտակային բաղադրիչում: Պարտադիր կուտակային վճարների հավաքագրման և կենսաթոշակային հաշիվներին մուտքագրման գործընթացը**

**Հոդված 5. Պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակիցները**

1. Պարտադիր կուտակային բաղադրիչի պարտադիր կարգով մասնակցում են՝ 1971թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝

ա) վարձու աշխատողները,

բ) նոտարները,

գ) անհատ ձեռնարկատերերը:

2. Պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր կարգով մասնակցում են նաև 1971թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված այն օտարերկրացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ:

**Հոդված 6. Պարտադիր կուտակային բաղադրիչի կամավոր մասնակցությունը**

1. Պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր կարգով կարող են մասնակցել՝

1) մինչև 1971թ. ծնված՝

ա) վարձու աշխատողները,

բ) նոտարները,

գ) անհատ ձեռնարկատերերը,

2) ինքնազբաղված անձինք՝ անկախ տարիքից,

3) մինչև 1971թ. ծնված օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ կուտակային բաղադրիչին կամավոր միանալու որոշումը վերջնական է: Նրանք այլևս իրավունք չունեն փոխել պարտադիր կուտակային բաղադրիչին միանալու մասին իրենց որոշումը և վերադառնալ նախկին համակարգ՝ անկախ աշխատանքի փոփոխությունից կամ աշխատանքից դուրս գալուց:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք կուտակային բաղադրիչին կամավոր միանալու որոշում ընդունելու դեպքում պարտավոր են մասնակիցների ռեեստրը վարողի ինտերնետային կայք էջի կամ հաշվի օպերատորի միջոցով կամ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ տարբերակով մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացել կենսաթոշակային հաշիվ: Այն վայրում, որի միջոցով սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք բացել են կենսաթոշակային հաշիվ, մասնակցին պարտավոր են տրամադրել տեղեկանք կենսաթոշակային հաշիվ բացած լինելու վերաբերյալ: Կամավոր կերպով պարտադիր կուտակային համակարգին միացած անձը վերը նշված տեղեկանքը պարտավոր է տրամադրել իր գործատուին (հարկային գործակալին), որը դրա հիման վրա կիրականացնի սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված գործողությունները: Գործատուն (հարկային գործակալը) կամավոր կերպով պարտադիր կուտակային համակարգին միացած անձի կողմից կենսաթոշակային հաշիվ բացելուն հաջորդող ամսվա բազային եկամտից հաշվարկում և վճարում է կուտակային վճար:

Գործատուի փոփոխման դեպքում նոր գործատուին պարտադիր կուտակային համակարգի մասնակից լինելու մասին չհայտնելու դեպքում, անձի պարտադիր կուտակային բաղադրիչին մասնակից լինելու փաստը հայտնի դառնալուց հետո, հետագա աշխատավարձերից գործատուն ամբողջությամբ փոխանցում է անձի նախորդ ժամանակահատվածում վճարման ենթակա, բայց չվճարված պարտադիր կուտակային վճարները:

Սույն հոդված 1-ին մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերում նշված անձինք, որոնք կամավոր միացել են պարտադիր կուտակային համակարգին, ինքնուրույնաբար կատարում են պարտադիր կուտակային վճարներ:

### Հոդված 7. Պարտադիր կուտակային վճարի դրույքաչափերը

1. Սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված մասնակիցների համար կուտակային վճարները կատարվում են բազային եկամտի 10% դրույքաչափով, հետևյալ կերպ՝

1) մասնակից հանդիսացող վարձու աշխատողները, օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ, ում բազային եկամուտը ամսական կտրվածքով չի գերազանցում 500000 դրամը, պարտավոր է իր կենսաթոշակային հաշվին կատարել ամսեկան կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի կենսաթոշակային հաշվին վճարվում է պետական բյուջեից,

2) մասնակից հանդիսացող վարձու աշխատողները, օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ, ում բազային եկամուտը ամսական կտրվածքով գերազանցում է 500000 դրամը, պետական բյուջեից մասնակցի կենսաթոշակային հաշվին կատարվող ամսեկան վճարը կազմում է 25000 դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած գումարը ամսեկան վճարվում է մասնակցի կողմից,

3) անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակիցը, ում բազային եկամուտը տարեկան կտրվածքով չի գերազանցում 6000000 դրամը, պարտավոր է իր կենսաթոշակային հաշվին տարեկան կատարել կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի կենսաթոշակային հաշվին վճարվում է պետական բյուջեից,

4) անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակիցը, ում բազային եկամուտը տարեկան կտրվածքով գերազանցում է 6000000 դրամը, պետական բյուջեից մասնակցի կենսաթոշակային հաշվին կատարվող

տարեկան վճարը կազմում է 300000 դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած գումարը տարեկան վճարվում է մասնակցի կողմից:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցը կուտակային վճարներ է կատարում բազային եկամտի 5%-ի չափով: Նրա կենսաթոշակային հաշվին պետական բյուջեից հավելյալ վճար չի կատարվում:

Եթե 1971 թվականից հետո ծնված և պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած ինքնազբաղված անձինք մինչև իրենց 40 տարեկանը լրանալ անցնում են աշխատանքի որպես վարձու աշխատող, նոտար կամ անհատ ձեռնարկատեր, ապա նրանց վարձու աշխատանքից կամ որպես նոտար կամ անհատ ձեռնարկատեր աշխատելուց ստացված բազային եկամտի հանդեպ կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասը, իսկ ինքնազբաղվածությունից առաջացած եկամտի հանդեպ կիրառվում է սույն մասի 1-ին պարբերությունը: Եթե վարձու աշխատողը, նոտարը կամ անհատ ձեռնարկատերը դառնում է ինքնազբաղված անձ և հանդիսանում է պարտադիր կուտակային բաղադրիչի անդամ, ապա նրա վրա սույն հոդվածի 1-ին մասի փոխարեն սկսվում է տարածվել սույն մասի առաջին պարբերությունը:

3. Կուտակային վճար կատարելու պարտականությունը պահպանվում է մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը: Եթե կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակիցը շարունակում է աշխատել, ապա նա ազատվում է պարտադիր կուտակային վճար կատարելու պարտականությունից, սակայն նա իր կամքով կարող է շարունակել մասնակցել պարտադիր կուտակային բաղադրիչին: Պարտադիր կուտակային վճարները պետք է կատարվեն քանի դեռ մասնակիցների ռեեստրը վարողը չի ստացել համապատասխան դիմում այն դադարեցնելու մասին: Ռեեստրը վարողը անձի պարտադիր կուտակային վճարումները դադարեցնելու մասին տեղեկացնում է պարտադիր կուտակային վճարները հավաքագրող և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմնին:

**Հոդված 8. Պարտադիր կուտակային վճարներ կատարելը**

1. Իրենց աշխատողների համար կուտակային վճարները հաշվարկելու և պետական լիազոր մարմին փոխանցելու պարտականությունը կրում են գործատուները՝ որպես հարկային գործակալ:

Գործատուները հարկային գործակալ են համարվում նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի, 2-րդ կետում ներառված քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների և 3-րդ կետի համաձայն պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած անձանց համար:

2. Գործատուները պարտավոր են ճշտել արդյոք աշխատողները համարվում են պարտադիր կուտակային վճար կատարելու պարտավոր անձինք և այդ անձանց բազային եկամտից հաշվարկել, պահել և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում կատարել կուտակային վճար՝ սույն օրենքով սահմանված դրույքաչափով:

Գործատուները պարտավոր են նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցների աշխատավարձից հաշվարկել, պահել և «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում յուրաքանչյու ամիս կատարել կուտակային կենսաթոշակային վճար՝ սույն օրենքով սահմանված դրույքաչափով:

Սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անձի պարտադիր կուտակային համակարգին միանալու մասին որոշման կայացված լինելու փաստը գործատուի և կուտակային վճարների հավաքագրում իրականացնող պետական լիազոր մարմնի միջև ճշտվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

3. Գործատուները «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում կուտակային վճարների հավաքագրում իրականացնող պետական լիազոր մարմին են ներկայացնում անհատական/ անձնավորված էլեկտրոնային հաշվետվություն, որը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) մասնակցի՝ այդ թվում քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների, անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը,

բ) սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

գ) մասնակցի՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հարկման ենթակա եկամտի չափը,

դ) յուրաքանչյուր մասնակցի կուտակային վճարի չափը,

ե) գործատուի ՀՎՀՀ/ հարկ վճարողի հաշվառման համարը:

4. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը և ինքնազբաղվածները, բացառությամբ քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների, որոնք ներառված են սույն հոդվածի 3-րդ մասում, պարտավոր են ինքնուրույն հաշվարկել և կատարել պարտադիր կուտակային վճարներ տարեկան կտրվածքով՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

Վարձու աշխատողները, քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատողները (ծառայություններ մատուցողները), օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում են բազային եկամուտ, որոնք միացած են կամ պարտավոր էին միանանալ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին և որոնց գործատուները օրենքով կամ միջազգային պայմանագրերով ազատված են հարկային գործակալ լինելու պարտավորությունից, պարտավոր են յուրաքանչյուր ամիս ինքնուրույնաբար հաշվարկել և վճարել պարտադիր կուտակային վճարները՝ սույն օրենքով գործատուների համար սահմանված կանոններով:

5. Նոտարները, անհատ ձեռնարկատերերը, սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում նշված անձինք և ինքնազբաղվածները, բացառությամբ քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների, որոնք ներառված են սույն հոդվածի 3-րդ մասում, «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում պարտադիր կուտակային վճարների հավաքագրում իրականացնող պետական լիազոր մարմին են ներկայացնում էլեկտրոնային հաշվետվություն, որը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները՝

ա) նոտարի, անհատ ձեռնարկատիրոջ կամ ինքնազբաղված անձի անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը,

բ) սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

գ) նոտարի, անհատ ձեռնարկատիրոջ կամ ինքնազբաղված անձի հարկման ենթակա եկամտի չափը,

դ) նոտարի, անհատ ձեռնարկատիրոջ, ինքնազբաղված անձի պարտադիր կուտակային վճարի չափը,

ե) նոտարի, անհատ ձեռնարկատրիրոջ և ինքնազբաղված անձի (ունենալու դեպքում) ՀՎՀՀ /հարկ վճարողի հաշվառման համարը:

6. Սույն հոդվածի համաձայն հարկային գործակալի պարտականությունները կատարողները պարտավոր են պարտադիր կուտակային վճարը և եկամտային հարկը վճարել միաժամանակ:

7. Պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտով սահմանվում է հաշվետվության ձևը, որում կարող են նախատեսվել նաև այլ տեղեկություններ, որոնք պետք է ներառվեն հաշվետվությունում:

**Հոդված 9. Մասնակիցների ռեեստրը վարողին անձնավորված տեղեկատվությունը և պարտադիր կուտակային վճարները փոխանցելը**

1. Պարտադիր կուտակային վճարները հավաքագրող և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմինը պարտադիր կուտակային վճարների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու սահմանված ժամկետից կամ փաստացի ստանալու օրվանից հետո 10 օրյա ժամկետում մշակում է դրանք: Այն անձանց համար, որոնց վերաբերյալ տեղեկություններում չկան սխալներ և կամուրջ հաշվին մուտքագրվել են հաշվետվության մեջ նշված կուտակային վճարները, պարտադիր կուտակային վճարները հավաքագրող և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմինը վճարման հանձնարարականներ է ուղարկում գանձապետարան՝ կամուրջ հաշվին մուտքագրված գումարներից և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համապատասխան գումարները մասնակիցների ռեեստրը վարողին փոխանցելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հանձնարականի հետ միաժամանակ (նույն օրը) պարտադիր կուտակային վճարները հավաքագրող և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմինը պարտադիր կուտակային վճարների մասին անհատական տեղեկատվությունը ներկայացնում է մասնակիցների ռեեստրը վարողին:

3. Պարտադիր կուտակային վճարները հավաքագրող և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմնի կողմից մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող տեղեկատվությունը պարունակում են մասնակիցների մասին հետևյալ տեղեկությունները`

ա) մասնակցի անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը,

բ) մասնակցի սոցիալական քարտի համար կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

գ) կուտակային վճարի չափը,

դ) պետական բյուջեից ներդրման չափը,

ե) գործատուի, ինչպես նաև նոտարի և անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ/ հարկ վճարողի հաշվառման համարը:

զ) Հայստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ տեղեկություններ:

4. Կուտակային վճարները և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցելու հետ կապված սխալները շտկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Մասնակիցների ռեեստրի հաշվին ավել փոխանցված կուտակային վճարները չեն վերադարձվում մասնակիցներին, այլ հաշվի են առնվում հետագա կուտակային վճարները հաշվարկելիս և վճարելիս, բացառությամբ հարցը ըստ էության լուծող դատական ակտի հիման վրա և ստուգման ակտի արդյունքում կատարված ճշտումների հիման վրա:

**Հոդված 10. Անհատական կենսաթոշակային հաշվի բացումը**

1. Մասնակիցների ռեեստրը վարողը այս օրենքի 5-րդ հոդվածով սահմանված անձանց համար առաջին վճարում ստանալու դեպքում բացում է մասնակցի կենսաթոշակային հաշիվ: Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված մասնակիցները պարտավոր են սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կարգով ներկայացնել կենսաթոշակային հաշիվ բացելու դիմում, որի հիման վրա մասնակիցների ռեեստրը վարողը մասնակիցների համար բացում է կենսաթոշակային հաշիվ:

2. Մասնակիցների ռեեստրը վարողը գրավոր տեղեկացնում է մասնակցին իր համար կենսաթոշակային հաշիվ բացելու մասին, ինչպես նաև այն փաստի մասին, որ, եթե մասնակցի կողմից 30 օրյա ժամկետում մասնակիցների ռեեստրը վարողին սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված գործընթացով չներկայացվի դիմում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու վերաբերյալ, ապա այն կկատարվի ծրագրային մոդուլի միջոցով` պատահականության սկզբունքով:

3. Կենսաթոշակային հաշիվը մասնակիցների ռեեստրը վարողը վարում է մինչև սույն օրենքով սահմանված ժառանգումը կամ ժառանգման ժամկետի ավարտը:

4. Մասնակիցների ռեեստրը վարողի փոփոխության կամ նրա գործունեության դադարեցման դեպքում մասնակիցների ռեեստրը փոխանցվում է մասնակիցների ռեեստր վարող այլ անձին կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Մասնակիցների ռեեստրի փոխանցման կարգը, ձևը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Հաշվի օպերատորը մասնակիցների դիմումի հիման վրա միջնորդություն է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին

1) կենսաթոշակային հաշիվ բացելու մասին,

2) մասնակիցների անձնական տվյալներում փոփոխություն կատարելու մասին,

3) մասնակցի կողմից ընտրված ֆոնդի կառավարչի և կամ ֆոնդի ընտրության և/կամ փոփոխության մասին,

4) մասնակցի հաշվի վերաբերյալ տեղեկատվության մասին:

6. Հաշվի օպերատորը պետք է ապահովի իր գործառույթների կատարման ընթացքում մասնակիցների, նրանց կատարած ընտրության և այլնի մասին իրեն հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը:

Հաշվի օպերատոր չի կարող լինել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և պահառուին փոխկապակցված անձ: Հաշվի օպերատորին և նրա աշխատակիցներին արգելվում է դիմորդներին մատուցել խորհրդատվական ծառայություններ, գովազդել որևէ կենսաթոշակային ֆոնդ կամ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ կամ որևէ այլ կերպ ուղղորդել իրենց դիմող մասնակիցներին ընտրել կենսթոշակային ֆոնդի կառավարիչ կամ կենսթոշակային ֆոնդ:

**Հոդված 11. Պարտադիր կուտակային վճարները կենսաթոշակային ֆոնդի փայերի վերածելը**

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսական ոլորտի լիազորված մարմինը պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմնի հանձնարարականում նշված չափով պարտադիր կուտակային վճարները փոխանցում է մասնակիցների ռեեստրը վարողի կենտրոնական բանկում բացված հաշվին:

Պարտադիր կուտակային վճարների հավաքագրում ու անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմնի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է լիազոր մարմնից ստացված ընդհանուր գումարը բաշխել` ըստ մասնակիցների կենսաթոշակային հաշիվների:

2. Պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմնի տրամադրած տեղեկատվությունը նույնացվում (համադրվում) է անհատական հաշվի համարի հետ, այնուհետև կատարվում է գումարների բաշխում ըստ մասնակիցների:

3. Մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին մուտք եղած գումարների հիման վրա թողարկվում են կոնկրետ կենսաթոշակային ֆոնդի փայեր (այսուհետ` փայ): Յուրաքանչյուր նոր գումարի մուտքի դեպքում թողարկվում են նոր փայեր, որոնք ավելացվում են մասնակցի կենսաթոշակային հաշվին:

Հիմք ընդունելով արդեն իսկ թողարկված փայերը, թե դրանցից ինչ գումարի չափով են թողարկվել յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի համար, մասնակիցների ռեեստրը վարողը յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվին փոխանցում է համապատասխան գումար և դրան կից տեղեկատվություն թե որքան գումար է ավելացել կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից առաջարկվող կոնկրետ կենսաթոշակային ֆոնդում:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներին տրամադրում է տեղեկատվություն մասնակիցների կողմից կատարված վճարումների ընդհանուր գումարի մասին: Տեղեկատվությունը տրամադրվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներին` առանց որևէ նույնականացվող տեղեկության, այսինքն` կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները չեն տիրապետում որևէ տեղեկատվության, որը նրանց հնարավորություն կտա նույնականացնել կոնկրետ մարդուն: Մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներին կարող է տրամադրել առավելագույնը սույն օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասում նշված տեղեկատվությունը:

5. Փայի սկզբնական անվանական արժեքը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

**Հոդված 12. Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը**

1. Մասնակիցների ռեեստրը վարողը, տարին մեկ անգամ, անվճար, ոչ ուշ քան մինչև ապրիլի 15-ը, տեղեկատվություն է տրամադրում մասնակցին նրա կենսաթոշակային հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը ներկայացվում է գրավոր, եթե մասնակիցը տեղեկատվություն ստանալու իր համար այլ նախընտրելի ճանապարհ չի ընտրել: Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողը ուղարկում է

մասնակցի համար վերջին վճարումը կատարած հարկային գործակալի հասցեով, եթե մասնակիցը այլ նախընտրելի հասցե չի նշել: Մասնակիցը կարող է իր ցանկությամբ դադարեցնել տեղեկատվության ստացումը:

3. Տեղեկատվությունը ներկայացնելու ձևը, բովանդակությունը և կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրում վճարի դիմաց, որի չափը չի կարող գերազանցել դրա համար կատարված ծախսերը գումարած ռեեստրը վարողի ողջամիտ շահույթը:

5. Մասնակիցների ռեեստր վարողը օրական թարմացված տեղեկատվություն է տեղադրում իր ինտերնետային կայքում: Մասնակիցների ռեեստր վարողի ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությանը մասնակցի հասանելիությունը իր վերաբերյալ տեղեկատվությանը անվճար է:

**Հոդված 13.Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների կարգավիճակը և դրա սահմանափակումները**

1. Փայերի վերածված պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները, որոնք մուտքագրված են մասնակցի կենսաթոշակային հաշվին, համարվում են մասնակցի անձնական սեփականությունը:

Ամուսինների կենսաթոշակային ակտիվները համարվում են նրանցից յուրաքանչյուրի անձնական սեփականությունը:

2. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների նկատմամբ մասնակցի տնօրինման իրավունքը սահմանափակվում է մինչև մասնակցի`

1) «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված աշխատանքային կենսաթոշակային տարիքը լրանալը,

2) մահը,

3) անձին օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելը,

4) առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելը,

5) մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը:

3. Կուտակային կենսաթոշակային ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը չի կարող`

1) լինել գրավի առարկա,

2) ներդրվել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

3) նվիրաբերվել կամ օտարվել որևէ այլ եղանակով,

4) օգտագործվել այնպիսի եղանակով, որը կարող է հանգեցնել կուտակային կենսաթոշակային ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքի դադարմանը:

4. Մասնակցի պարտավորությունների համար պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների վրա բռնագանձում չի կարող տարածվել մինչև «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալը:

## Գլուխ 3

## Պարտադիր կուտակային բաղադրիչի կառավարումը

**Հոդված 14.Պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազոր մարմնի իրավասությունները**

1. Պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազոր մարմինը`

1) օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է պարտադիր կուտակային բաղադրիչի անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազան,

2) յուրաքանչյուր ամիս գործատուներից ընդունում է պարտադիր կուտակային վճարների մասին անհատական հաշվետվությունները և օրենքով սահմանված կարգով ստուգում դրանց հավաստիությունը,

3) «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եկամտային հարկի համար սահմանված ժամկետում նոտարներից, անհատ ձեռնարկատերերից ու ինքնազբաղված անձանցից ընդունում է պարտադիր կուտակային վճարների մասին հաշվետվությունները և օրենքով սահմանված կարգով ստուգում դրանց հավաստիությունը,

4) յուրաքանչյուր ամիս համադրում է գործատուներից ստացված անձնավորված տեղեկատվությունը` անձնավորված հաշվառման տվյալների բազայի հետ,

5) համադրում է նոտարներից, անհատ ձեռնարկատերերից ու ինքնազբաղված անձանցից ստացված անձնավորված տեղեկատվությունը` անձնավորված հաշվառման տվյալների բազայի հետ,

6) իրականացնում է գործատուների, նոտարների, անհատ ձեռնարկատերերի և ինքնազբաղված անձանց կողմից կատարվող պարտադիր կուտակային վճարների հավաքագրումը և հաշվետվություն է ներկայացնում հավաքագրումների վերաբերյալ ՀՀ կառավարության ֆինանսական ոլորտի լիազոր մարմին,

7) կատարված կուտակային վճարների և գործատուներից, անհատ ձեռնարկատերերից, նոտարներից ու ինքնազբաղված անձանցից ստացված տեղեկատվության միջև սխալներ հայտնաբերելու դեպքում տեղեկացնում է նրանց այդ մասին: Նրանք պարտավոր են շտկել սխալները և ներկայացնել ճշգրտված հաշվետվություն,

8) ուսումնասիրում է գործատուների, նոտարների, անհատ ձեռնարկատերերի և ինքնազբաղված անձանց կողմից կատարված պարտադիր կուտակային վճարների վերաբերյալ բողոքները և սխալները և անհրաժեշտության դեպքում պահանջում է ներկայացնել ճշգրտված հաշվարկներ,

9) համապատասխան հանձնարարականներ է ներկայացնում պետական լիազոր մարմնի կամուրջ հաշվին մուտքագրված գումարները մասնակիցների ռեեստրը վարողի` կենտրոնական բանկում գտնվող հաշվին փոխանցելու համար,

10) կատարված պարտադիր կուտակային վճարների վերաբերյալ անձնավորված տեղեկատվություն է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին,

11) պատասխանում է մասնակիցների գրավոր դիմումներին կապված պարտադիր կուտակային վճարների և հաշվետվությունների հետ,

12) իր իրավասությունների շրջանակներում ընդունում է նորմատիվ իրավական ակտեր և իրականացնում ստուգումներ,

13) հաշվետվություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն, Ֆինանսական ոլորտի լիազորված մարմին պարտադիր կուտակային բաղադրիչի անձնավորված հաշվառման բազայի և դրա վարման վերաբերյալ` նման պահանջի առկայության դեպքում,

14) իրականացնում է սույն օրենքից բխող այլ լիազորություններ:

2. Պարտադիր կուտակային վճարների հավաքագրումն իրականացնող պետական լիազոր մարմինը պարտավոր է սույն օրենքով հարկային գործակալի պարտականություն կրող անձանց տրամադրել անձնավորված հաշվետվություն ներկայացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային և/կամ թղթային ձևեր, որը համատեղելի կլինի պարտադիր կուտակային վճարների հավաքագրումն իրականացնող պետական լիազոր մարմնի կողմից վարվող անձնավորված հաշվառման տվյալների բազայի հետ:

**Հոդված 15. Կենտրոնական բանկի լիազորությունները**

Կենտրոնական բանկը`

1) սահմանում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների գործունեության` շուկայական, գործառնական, իրացվելիության ռիսկերի հետ կապված պրուդենցիալ պահանջները,

2) հաստատում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների ներդումային կենսաթոշակային ֆոնդի նկարագրությունը և յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործարար ծրագիրը, որը ներառում է ներդրումային ծրագիրը,

3) սահմանում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից մասնակիցներին և հանրությանը ներկայացվող հաշվետվությունների ձևերը,

4) կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներից ստացված հաշվետվական տեղեկատվության հիման վրա մշակում է պարտադիր կուտակային բաղադրիչի վերաբերյալ հանրային իրազեկման տեղեկատվական նյութեր,

5) սույն օրենքով սահմանված կարգով և դեպքերում համաձայնություն է տալիս կամ մերժում է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից իրականացվող գովազդների և գովազդային այլ հրապարակումների բովանդակությանը,

6) վերահսկում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների, պահառուների, մասնակիցների ռեեստրը վարողի և հաշվի օպերատորի գործունեության համապատասխանությունը սույն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին,

7) կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներից, պահառուից և մասնակիցների ռեեստր վարողից ընդունում է սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները և վերլուծում դրանք,

8) իր լիազորությունների շրջանակներում ստուգումներ է իրականացնում մասնակիցների ռեեստրը վարողի, հաշվի օպերատորների, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների և պահառուների մոտ,

9) սահմանում է մասնակիցների ռեեստրի, այդ թվում` մասնակիցների կենսաթոշակային հաշիվների վարման, սույն օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն կենսաթոշակային ակտիվները փայերի վերածման, ինչպես նաև կենսաթոշակային ակտիվների պահառության ընդհանուր կանոնները,

10) սահմանում է հաշվի օպերատորի գործունեության կարգը

11) իրականացնում է սույն օրենքից և այլ իրավական ակտերից բխող այլ գործառույթներ:

**Հոդված 16. Մասնակիցների ռեեստրը վարողի գործառույթները**

Մասնակիցների ռեեստրը վարողը սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա `

1) իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով մասնակիցների ռեեստրը վարողին վերապահված գործառույթները,

2) սույն օրենքով սահմանված կարգով բացում է մասնակիցների կենսաթոշակային հաշիվները,

3) սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված անձանց համար կենսաթոշակային հաշիվներ բացելու դեպքում տեղեկացնում է այդ մասին պարտադիր կուտակային վճարները հավաքագրող և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմնին.

4) մասնակցի ցանկության դեպքում տեխնիկական միջոցներով ապահովում է մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի, կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրության, ինչպես նաև նրա հաշվի քաղվածքում առկա տեղեկատվության գաղտնիությունը: Սույն կետում նշված գաղտնիության ապահովման կարգը սահմանում է մասնակիցների ռեեստրը վարողը` համաձայնեցնելով այն Հայաստանի Հանրապետության կառավարության հետ:

5) վարում է մասնակիցների կենսաթոշակային հաշիվները և սույն օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն կենսաթոշակային ակտիվները վերածում է փայերի,

6) պարտադիր կուտակային ակտիվները փոխանցում է պահառուին` առանց բացահայտելու ընտրություն կատարած մասնակիցներին,

7) սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկատվություն է տրամադրում մասնակիցներին կենսաթոշակային հաշիվների վերաբերյալ,

8) կենսաթոշակային ակտիվները փոխանցում է մեկ կենսաթոշակային ֆոնդի կառավարչից մյուսին` մասնակցի կողմից համապատասխան դիմում ստանալուց հետո 30 օրվա ընթացքում,

9) կենսաթոշակային հաշիվներից ակտիվները փոխանցում է ապահովագրական ընկերություններին` սույն օրենքի համաձայն անուիտետի պայմանագիր կնքելու համար,

10) սույն օրենքով սահմանված կարգով իրականացնում է միանվագ և ծրագրային վճարներ,

11) փոխանցում է մահացած մասնակցի կենսաթոշակային հաշվի կուտակային ակտիվները` հիմք ընդունելով սույն օրենքի համաձայն կատարված ժառանգների կամահայտնությունը,

12) իրականացնում է կենսաթոշակային ֆոնդի փայերի թողարկումը, մարումը, փոխանակումը և փայի արժեքի ամենօրյա հաշվարկ,

13) կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով, բովանդակությամբ և պարբերականությամբ հաշվետվություններ է ներկայացնում կենտրոնական բանկ,

14) իրականացնում է սույն օրենքից և Հայաստանի Հանրապետության կառավարության ու մասնակիցների ռեեստրը վարողի միջև կնքված պայմանագրից բխող այլ գործառույթներ:

**Հոդված 17. Ֆինանսական ոլորտի լիազորված մարմնի գործառույթները**

Ֆինանսական ոլորտի լիազորված մարմինը`

1) անհատական հաշվառում և կուտակային վճարների հավաքագրումն իրականացնող մարմնին տեղեկացնում է կուտակային վճարների կատարման մասին և համապատասխան հանձնարարական ստանալու դեպքում գանձապետական համակարգի միջոցով ապահովում է պարտադիր կուտակային վճարների փոխանցումը մասնակիցների ռեեստրը վարողին,

2) իրականացնում է կանխատեսումներ յուրաքանչյուր ֆիսկալ տարում պետական բյուջեից սույն օրենքի համաձայն մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին կատարվող ներդրումների չափի վերաբերյալ, որոնք հաշվի են առնվում յուրաքանչյուր տարի պետական բյուջեի նախագիծը կազմելիս,

3) մշակում և ապահովում է կուտակային կենսաթոշակային համակարգի միասնական քաղաքականությունը:

4) սույն օրենքի 44-րդ և 68-րդ հոդվածների 1-ին մասերին համաձայն ներդրումների ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացում ՀՀ կառավարությանը:

## Գլուխ 4

## Կենսաթոշակային գաղտնիք

**Հոդված 18. Կենսաթոշակային գաղտնիքի պահպանումը**

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազոր մարմինը և կենտրոնական բանկը պարտավոր են երաշխավորել իրենց կողմից կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը:

2. Գործատուները, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական մարմինը և կենտրոնական բանկը պարտավոր են տեխնիկական այնպիսի միջոցներ ձեռնարկել և կազմակերպչական այնպիսի կանոններ սահմանել, որոնք անհրաժեշտ են կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները պատշաճ պահպանելու համար:

3. Գործատուի, մասնակիցների ռեեստրը վարողի, հաշվի օպերատորի, կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական մարմնի և կենտրոնական բանկի ղեկավարներին, ծառայողներին, նախկինում ղեկավար կամ ծառայող հանդիսացող անձանց արգելվում է ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ իրենց վստահված կամ հայտնի դարձած կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակելը, ինչպես նաև իր անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով դրանք օգտագործելը, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ուղղակի կամ անուղղակի ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով այն հնարավոր դարձնելը:

4. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական մարմինը կարող են դատարանում հրապարակել կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները մասնակցի վերաբերյալ՝ մասնակցի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտության դեպքում և սահմաններում, եթե վեճը ծագել է մասնակցի և մասնակիցների ռեեստրը վարողի կամ հաշվի օպերատորի կամ մասնակիցների անհատական հաշվառում իրականացնող պետական մարմնի կամ գործատուի միջև:

5. Գործատուները, մասնակիցների ռեեստրը վարողը և կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական մարմինը պարտավոր են մասնակիցների շահերի պաշտպանության նպատակով մեկը մյուսին տեղեկատվություն տրամադրել մասնակիցների կենսաթոշակային հաշիվների վերաբերյալ, բացառությամբ մասնակցի կողմից ընտրած կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի, կենսաթոշակային ֆոնդի և մասնակցի կուտակված կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկատվության:

6. Մասնակիցների ռեեստր վարողը կամ կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական մարմինը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչին կարող են տրամադրել առավելագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդ ընտրած մասնակիցների քանակը,

2) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդ ընտրած մասնակիցների տարիքային կազմը նվազագույնը 5 տարվա տարիքային կտրվածքով,

3) տվյալ ամսվա ընթացքում տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդից դուրս եկած մասնակիցների տարիքային կազմը նվազագույնը 5 տարվա տարիքային կտրվածքով,

4) ամսեկան կտրվածքով տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդին միացած մասնակիցների քանակը,

5) տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների աշխատավարձային բաշխվածությունը՝ նվազագույնը հարյուր հազար դրամի բաշխվածությամբ, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդը տվյալ ամսում ընտրած մասնակիցների աշխատավարձային բաշխվածությունը՝ նվազագույնը հարյուր հազար դրամի բաշխվածությամբ;

6) տվյալ տարում տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներից կենսաթոշակային տարիքը լրացող մասնակիցների թիվը:

Մասնակիցների ռեեստր վարողը և կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական մարմինը պարտավոր են ապահովել իրենց մոտ առկա կամ հաշվարկման համար հիմք հանդիսացող այլ տեղեկատվության հասանելիության բացառումը կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների համար, որը կարող է օժանդակել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ի հայտ բերելու կոնկրետ մասնակցի, կոնկրետ գործատուին կամ կոնկրետ բնագավառ, որտեղ աշխատում է մասնակիցը:

**Հոդված 19. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը քրեական հետապնդում իրականացնող մարմիններին**

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական մարմինը կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին սույն օրենքին համապատասխան տրամադրում են միայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կայացված դատարանի որոշման հիման վրա:

2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող պետական մարմինը պարտավոր են դատարանի որոշումն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, քրեական հետապնդում իրականացնող մարմնին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները:

3. Արգելվում է մասնակիցներին տեղեկացնել նրանց մասին կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի մասին:

### Հոդված 20. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը դատարանին

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող պետական մարմինը քաղաքացիական և քրեական գործերի կողմ հանդիսացող մասնակցի վերաբերյալ կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները սույն օրենքին համապատասխան տրամադրում են դատարանին միայն վերջինիս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա:

2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող պետական մարմինը պարտավոր են դատարանի որոշումը ստանալու պահից՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, դատարանին կամ դատարանի լիազորած անձին տրամադրել տվյալ որոշմամբ, վճռով կամ դատավճռով պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը:

### Հոդված 21. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը մասնակցի ժառանգներին

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող պետական մարմինը մասնակցի վերաբերյալ կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները սույն օրենքին համապատասխան տրամադրում են տվյալ մասնակցի ժառանգներին, եթե վերջիններս ժառանգության իրավունքները հիմնավորող փաստաթղթեր են ներկայացրել:

2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող պետական մարմինը պարտավոր են ժառանգության իրավունքները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում նրանց հաղորդել մասնակցի վերաբերյալ իրենց մոտ եղած տեղեկությունները և տրամադրել իրենց մոտ առկա փաստաթղթերը:

3. Գործատուի, մասնակիցների ռեեստրը վարողի, կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող պետական մարմնի կողմից սույն հոդվածին համապատասխան տեղեկությունները հաղորդելու և փաստաթղթերը ներկայացնելու մերժումը կամ սահմանված ժամկետներում չներկայացնելը կարող է բողոքարկվել դատարան: Մերժման կամ սույն օրենքով սահմանված ժամկետներում տեղեկությունները չհաղորդելու և փաստաթղթերը չներկայացնելու հետևանքով դիմող անձանց կամ կազմակերպություններին պատճառված վնասը ենթակա է հատուցման օրենքով սահմանված կարգով, եթե մերժումը եղել է անհիմն, կամ ժամկետները խախտվել են գործատուի, մասնակիցների ռեեստրը վարողի, կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող պետական մարմնի մեղքով:

## Գլուխ 5

## Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ

### Հոդված 22. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործառույթները

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը (այսուհետ՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ) սույն օրենքի համաձայն մասնակիցներին մատուցում է կուտակային կենսաթոշակային ֆոնդի կառավարման ծառայություններ:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարում իրականացնող կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները, իրավունք չունեն զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ սույն օրենքով սահմանված կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի կառավարման և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ստանդարտ ֆոնդերի կառավարման:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է միևնույն պայմաններով կենսաթոշակային ֆոնդի կառավարման ծառայություններ մատուցել յուրաքանչյուր մասնակցի, ով սույն օրենքով սահմանված կարգով ընտրել է տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին (հրապարակային պայմանագիր):

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է կենսաթոշակային ֆոնդի կառավարման ծառայությունները մատուցել պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ՝ գործելով բարեխղճորեն՝ ելնելով բացառապես մասնակիցների շահերից (ֆիդուցիար պարտականություն):

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է տարանջատել իր և մասնակիցների կողմից կառավարման հանձնված ակտիվները և դրանց վերաբերյալ վարել առանձին հաշվառում:

5. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարմանը հանձնված կենսաթոշակային ակտիվները չեն համարվում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սեփականությունը և դրանց վրա բռնագանձում չի կարող տարածվել կենսաթոշակային ֆոնդի կառավարչի պարտավորությունների համար, ներառյալ՝ սնանկության դեպքում:

6. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի շուկայական արժեքի հիման վրա կենտրոնական բանկի ուղեցույցին համաձայն, օրական կտրվածքով, կատարում է ֆոնդի արժեքի վերագնահատում, որի հիման վրա որոշվում է կուտակային կենսաթոշակային ակտիվների ընթացիկ արժեքը:

**Հոդված 23.Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կազմակերպաիրավական ձևերը**

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները կարող են ստեղծվել «Ներդրումային ֆոնդերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կազմակերպաիրավական տեսակներով:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով:

**Հոդված 24. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի պետական գրանցումը և լիցենզավորումը**

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների պետական գրանցումն ու լիցենզավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 25. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչների նկատմամբ պահանջներն ու սահմանափակումները**

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ գործում են սույն օրենքով և «Ներդրումային ֆոնդեր մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ներդրումային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ սահմանված պահանջներն ու սահմանափակումները:

**Հոդված 26. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ֆիրմային անվանումը, մասնակցության սահմանափակումները, կառավարման մարմինները և ղեկավարները, նրանց մասնագիտական համապատասխանությունը և որակավորումը**

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ֆիրմային անվանման, նրա կապիտալում մասնակցության սահմանափակումները, նրա կառավարման մարմինները և ղեկավարները, ղեկավարների մասնագիտական համապատասխանության և որակավորման հարցերը կարգավորվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

**Հոդված 27. Ֆինանսական գործունեության արտաքին աուդիտը: Տարեկան աուդիտի եզրակացությունը**

1. Կենսաթոշակային ֆոնդի և նրա կառավարչի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է հրապարակել, ինչպես նաև իր ինտերնետային կայքում տեղադրել ընկերության ֆինանսական հաշվետվությունները և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:

**Հոդված 28. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ վերահսկողությունը: Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվետվություններ ներկայացնելու պարտականությունը**

1. Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կենտրոնական բանկը:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են տրամադրել սույն օրենքով և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաշվետվություններն ու տեղեկությունները: Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են ներկայացնել նաև կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ հաշվետվություններ:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից ներկայացվող հաշվետվություններն ու տեղեկությունները պետք է լինեն հավաստի և ամբողջական:

**Հոդված 29. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի մասին տեղեկատվությունը և դրա հրապարակումը**

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի վերաբերյալ տեղեկությունները պետք է մատչելի լինեն յուրաքանչյուրի համար:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են մշտապես ունենալ գործող ինտերնետային կայք և ինտերնետային կայքում հրապարակել իրենց վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկությունները`

1) ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և տարեկան հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացությունը: Ընդ որում, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են սույն կետում նշված ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև մամուլում,

2)կենսաթոշակային ֆոնդերի/կենսաթոշակային ակտիվների կազմը և կառուցվածքը,

3) եկամտաբերության վերաբերյալ տեղեկատվություն,

4) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների մասին տեղեկատվություն, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները` դրանց առկայության դեպքում,

5) Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն` նրանց անունը (անվանումը), կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության չափը,

6) խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները (անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը):

Սույն մասի 1-6-րդ կետերում նշված տեղեկություններից բացի, կենտրոնական բանկն իրավունք ունի պահանջել կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներից իրենց ինտերնետային կայքում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաճախականությամբ և կարգով հրապարակել նաև այլ տեղեկություններ, բացառությամբ օրենքով սահմանված առևտրային, կենսաթոշակային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են իրենց ինտերնետային կայքում կամ հասարակության համար հասանելի այլ ձևով

հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իրենց կողմից առաջարկվող կենսաթոշակային ֆոնդերի մասին:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ մինչև մայիսի 1-ը, մամուլում հրապարակել աուդիտորական եզրակացությունը և տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

5. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչներն իրավունք չունեն իրենց գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իրենց անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

6. Կենսաթոշակային ֆոնդի եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները սահմանում է կենտրոնական բանկը:

7. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից սույն հոդվածի համաձայն հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն հավաստի և ամբողջական:

**Հոդված 30. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կանոնադրական կապիտալը և դրան ներկայացվող պահանջները**

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նվազագույն կանոնադրական կապիտալը սահմանվում է կենտրոնական բանկի կողմից, սակայն այն չի կարող լինել հինգհարյուր միլիոն դրամից պակաս պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր կառավարողների համար և երկուհարյուր միլիոն դրամից պակաս՝ կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների համար:

**Հոդված 31. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գովազդը**

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իր գործունեության վերաբերյալ գովազդ համարվող ցանկացած տեղեկատվության բովանդակությունը գովազդի ձևով հրապարակման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ համաձայնեցնել կենտրոնական բանկի հետ:

2. Կենտրոնական բանկը չի տալիս համաձայնություն հրապարակել գովազդային տեղեկատվությունը, եթե այն`

1) հակասում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին,

2) հակասում է սույն օրենքին և կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին,

3) պարունակում է թյուր կամ ապակողմնորոշող տեղեկություններ:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին արգելվում է՝

1)հրապարակվող տեղեկատվությամբ երաշխավորել կուտակային կենսաթոշակային ակտիվների կանխատեսված կամ ակնկալվող աճ, ինչպես նաև վճարման ենթակա կուտակային կենսաթոշակների կանխատեսված գումարների չափերը,

2)չհիմնավորված կամ ապակողմնորոշիչ խոստումների միջոցով ազդել անձի վրա՝ նրան դրդելով ընտրել տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին,

3) օգտագործել գովազդային նյութեր անբարեխիղճ մրցակցության համար՝ նշելով կենսաթոշակային ֆոնդի կառավարման նույնանման գործունեություն իրականացնող այլ սուբյեկտների ցանկացած թերություններ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ տեղեկություններն իրականում հավաստի են, թե ոչ:

**Հոդված 32. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործունեության դադարումը**

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները կարող են իրենց հայեցողությամբ դադարեցնել իրենց գործունեությունը (գործունեության կամավոր դադարում):

2. Իրենց հայեցողությամբ գործունեությունը դադարեցնելու մտադրության դեպքում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են ենթադրյալ դադարեցման օրվանից առնվազն վեց ամիս առաջ այդ մասին տեղեկացնել կենտրոնական բանկին և մասնակիցների ռեեստրը վարողին:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լիցենզիան կամ կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչի սնանկ ճանաչվելու դեպքերում (գործունեության հարկադիր դադարում) կենտրոնական բանկը պարտավոր է այդ մասին տեղեկացնել մասնակիցների ռեեստրը վարողին` որոշման ընդունման օրվանից 3 օրյա ժամկետում:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է 10 օրյա ժամկետում տեղեկացնել տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ընտրած մասնակիցներին կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գործունեության դադարման, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նոր ընտրություն կատարելու նրանց իրավունքի մասին:

5. Տեղեկությունը ստանալուց հետո 60 օրյա ժամկետում մասնակիցները իրավունք ունեն սույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված կարգով անվճար կատարել նոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և նոր կենսաթոշակային ֆոնդի ընտրություն:

6. Սույն հոդվածի 5-րդ մասում սահմանված ժամկետում ընտրություն չկատարած մասնակիցները բաշխվում են այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների միջև սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված կարգով:

7. Սույն հոդվածում նշված ժամկետների հաշվարկը կասեցվում է, եթե կենտրոնական բանկի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության կարգավորվող շուկան փակ է:

## Գլուխ 6

## Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառությունը

### Հոդված 33. Կենսաթոշակային ֆոնդի պահառուն

1. Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառությունը իրականացվում է սույն օրենքով և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Պահառուն պարտավոր է ակտիվների պահառության ծառայությունները մատուցել պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ` գործելով բարեխղճորեն` ելնելով բացառապես մասնակիցների շահերից (ֆիդուցիար պարտականություն):

3. Պահառուն պարտավոր է տարանջատել իր և այլ անձանց ակտիվներից պարտադիր կուտակային ակտիվները և դրանց վերաբերյալ վարել առանձնացված հաշվառում:

4. Պահառու կարող է լինել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այն բանկը, որն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առնվազն 2 տարի մատուցում է արժեթղթերի պահառության ծառայություն:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին արգելվում է պահառության պայմանագիր կնքել իր հետ փոխկապակցված պահառուի հետ:

5. Այն դեպքում, երբ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտադիր կուտակային ակտիվներ ունի նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս, ապա պահառուն պարտավոր է կնքել համապատասխան պայմանագիր ենթապահառուի հետ` այդ պահառության գործառույթներն ենթապահառուի միջոցով իրականացնելու համար: Ենթապահառուն պետք է լինի տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով ներդրումային ֆոնդերի պահառության իրավունք ունեցող կազմակերպություն:

6. Պահառուն իրավունք ունի միաժամանակ իրականացնել երկու և ավելի կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառությունը: Այդ դեպքում պահառուն պարտավոր է տարանջատել և վարել առանձնացված հաշվառում ինչպես իր սեփական, այնպես էլ յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ակտիվների, դրանց հետ իրականացվող գործառնությունների և գրառումների վերաբերյալ:

7. Կենսաթոշակային ակտիվները չեն համարվում պահառուի սեփականությունը և դրանց վրա բռնագանձում չի կարող տարածվել պահառուի պարտավորությունների համար, ներառյալ` սնանկության դեպքում:

**Հոդված 34. Պահառուի գործառույթները**

Բացի «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործառույթներից, պահառուն պարտավոր է կենտրոնական բանկին ծանուցել կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից սույն օրենքի, կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի և ներդրումային ծրագրի կանոնների ու պահանջների խախտման կամ նման խախտման մեջ հիմնավոր կասկածներ ունենալու մասին: Սույն մասում նշված խախտումը բացահայտելու կամ խախտման մեջ կասկածելու դեպքում Պահառուն պարտավոր է 1 օրվա ընթացքում դրա մասին ծանուցել կենտրոնական բանկին:

**Հոդված 35. Պահառուի պատասխանատվությունը**

1. Պահառուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի միջև կնքված պայմանագիրը չի կարող սահմանափակել սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված պահառուի պատասխանատվությունը:

3. Պահառուն պատասխանատվություն է կրում իր գործողությունների կամ անգործության հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար: Այդ վնասները չեն կարող հատուցվել պահառության հանձնված պարտադիր կուտակային ակտիվների հաշվին:

4. Սույն օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն պահառուի պարտականությունների մի մասը ենթապահառուի կողմից իրականացվելու դեպքում, պահառուն ենթապահառուի հետ միասին համապարտ պատասխանատվություն է կրում պատճառված վնասների համար:

**Հոդված 36. Պահառուի գործունեության դադարումը**

1. Պահառուն կարող է իր հայեցողությամբ դադարեցնել իր գործունեությունը (գործունեության կամավոր դադարում):

2. Իր հայեցողությամբ գործունեությունը դադարեցնելու մտադրության դեպքում պահառուն պարտավոր է ենթադրյալ դադարեցման օրվանից առնվազն 90 օր առաջ այդ մասին տեղեկացնել կենտրոնական բանկին, մասնակիցների ռեեստրը վարողին և կենսաթոշակային ֆոնդի կառավարչին:

3. Պահառուի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու, ինչպես նաև պահառուի սնանկ ճանաչվելու դեպքերում (գործունեության հարկադիր դադարում) կենտրոնական բանկը պարտավոր է այդ մասին տեղեկացնել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին ՝ որոշման ընդունման օրվանից 3 օրյա ժամկետում:

4. Տեղեկատվությունը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է կազմել պահառության ծառայություններն այլ պահառուի փոխանցելու ծրագիր:

5. Տեղեկությունը ստանալուց հետո 60 օրյա ժամկետում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է պահառության պայմանագիր կնքել այլ պահառուի հետ:

6. Պահառության պայմանագիրը դադարելուց հետո պահառուն պարտավոր է ակտիվները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը փոխանցել նոր պահառուին: Պահառուն շարունակում է պատասխանատվություն կրել մինչև ակտիվները և փաստաթղթերը լրիվ փոխանցելը:

**Գլուխ 7**

**Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների և կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը**

**Հոդված 37. Մասնակիցների կողմից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ ընտրելու պարտականությունը**

1. Կուտակային բաղադրիչի մասնակիցները պարտավոր են ընտրել մեկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և մեկ կենսաթոշակային ֆոնդ:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների և նրանց կենսաթոշակային ֆոնդերի մասին ամբողջական տեղեկատվությունը պետք է առկա լինի մասնակիցների ռեեստրը վարողի ինտերնետային կայք էջում, հաշվի օպերատորի մոտ և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վայրերում:

**Հոդված 38. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը**

1. Մասնակիցը պարտավոր է մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնել դիմում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրության մասին: Դիմումը ներկայացվում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միջոցներով՝ էլեկտրոնային տեսքով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) մասնակցի անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը, ծննդյան ամսաթիվը,

2) սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

3) մասնակցի կոնտակտային տվյալները (հեռախոս, էլ. փոստի հասցե և այլն)

4) մասնակցի՝ մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն (նամակ, էլեկտրոնային հաղորդագրություն և այլն) ստանալու նախընտրելի միջոցը,

5) ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անվանումը և կենսաթոշակային ֆոնդը,

6) հավաստում՝ ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարման վճարների և ֆոնդի կանոնների հետ համաձայն լինելու մասին,

7) հավաստում, որ տեղյակ է կուտակային վճարներ կատարելու իր պարտականության մասին,

8) դիմումի ներկայացման տարին, ամիսը և ամսաթիվը,

9) մասնակցի (մասնակցի լիազոր ներկայացուցչի) ստորագրությունը, բացառությամբ, այն դեպքերի, երբ դիմումը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, որն ապահովում է անձի նույնականացումը:

3. Սույն հոդվածի 1-րդ մասում նշված դիմումի ձևը սահմանվում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

**Հոդված 39. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարելը**

1. Կենսաթոշակային հաշվի բացումից հետո 30 օրյա ժամկետում մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրության իր պարտականությունը չկատարելու դեպքում մասնակցի համար կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրությունը կատարում է մասնակիցների ռեեստրը վարողը ծրագրային մոդուլի միջոցով:

Ծրագրային մոդուլը պատահականության սկզբունքով այլ մասնակիցների կողմից կատարված ընտրությանը համամասնորեն՝ հիմք ընդունելով նախորդ օրվա տվյալները, բաշխում է ընտրության չկատարած մասնակիցներին բոլոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների միջև:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրություն չկատարած անձանց գումարները տեղադրվում են պատահականության սկզբունքով ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի միջին ռիսկայնության (պահպանողական(կոնսերվատիվ)) կենսաթոշակային ֆոնդերում:

2. Մասնակիցների ռեեստր վարողը պարտավոր է անհապաղ գրավոր տեղեկացնել մասնակցին նրա անունից ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի մասին, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և կենսաթոշակային ֆոնդը փոխելու նրա իրավունքի մասին:

3. Մասնակիցները պարտավոր են տեղեկացնել մասնակցիների ռեեստրը վարողին կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրության մասին դիմումում նշված անձնական տվյալների փոփոխության մասին՝ ներկայացնելով կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված ձևի համապատասխան դիմում:

**Հոդված 40. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին փոխելու մասնակցի իրավունքը**

1. Մասնակիցն իրավունք ունի 12 ամիսը մեկ անգամ անվճար փոխել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և կենսաթոշակային ֆոնդը: Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և կենսաթոշակային ֆոնդը 12 ամսվա ընթացքում մեկ անգամից ավել փոփոխության դեպքում յուրաքանչյուր դեպքում գանձվում է վճար սույն օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, բացառությամբ սույն մասի 2-րդ և 3-րդ պարբերություններով նախատեսված դեպքերի:

Կենսաթոշակային ֆոնդի փոփոխման համար որևէ վճար չի գանձվում, եթե մասնակիցը փոխում է իր կենսաթոշակային ֆոնդը նույն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի այլ կենսաթոշակային ֆոնդի հետ:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչի փոփոխման համար որևէ վճար չի գանձվում, եթե մասնակիցը իր հետագա վճարումները կառավարելու համար ընտրում է նոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, իսկ նախկինում վճարված գումարները թողնում է նախկին կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարման ներքո: Այս դեպքում մասնակիցը լրացնում և մասնակիցների ռեեստրը վարողին է ներկայացնում է ընտրության դիմում, որը պետք է պարունակի սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունները:

2. Նախկին կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և/կամ նախկին կենսաթոշակային ֆոնդը նորով փոխելու նպատակով մասնակիցը պարտավոր է փոփոխման դիմում ներկայացնել մասնակիցների ռեեստրը վարողին: Դիմումը պետք է պարունակի սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև նախկին և նոր ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների անվանումները և կենսաթոշակային ֆոնդերը:

3. Մասնակիցների ռեեստրը վարողը մերժում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և կենսաթոշակային ֆոնդը փոխելու մասին դիմումը, եթե կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին դիմումը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին:

4. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է 5 օրյա ժամկետում տեղեկացնել դիմում ներկայացրած մասնակցին դիմումը մերժելու մասին՝ մատնանշելով մերժելու պատճառները:

5. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին մասի համաձայն պետք է գումար վճարվի կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ կենսաթոշակային ֆոնդը փոխելու համար, ապա մասնակիցների ռեեստրը վարողը, իմանալով մասնակցի փոփոխություն կատարելու ցանկության մասին, պետք է տեղեկացնի մասնակցին այդ մասին՝ նշելով վճարման ենթակա գումարի չափը:

6. Հետագա վճարումները նոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և/կամ նոր կենսաթոշակային ֆոնդ ուղղելու մասնակցի ընտրության դեպքում դիմումը մասնակիցների միասնական ռեեստր ներկայացնելու պահից սկսած մասնակցի վճարումները ուղղվում են նոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և/կամ նոր կենսաթոշակային ֆոնդ:

Նախկին կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և/կամ նախկին կենսաթոշակային ֆոնդի ակտիվները նոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և/կամ նոր կենսաթոշակային ֆոնդ տեղափոխելու ընտրություն կատարելու դեպքում մասնակցի վճարումները ուղղվում են նոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և/կամ նոր կենսաթոշակային ֆոնդ դիմումը մասնակիցների միասնական ռեեստր ներկայացնելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և/կամ կենսաթոշակային ֆոնդը փոխելու դեպքում փայի արժեքը հաշվարկվում է դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված գնով:

7. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և կենսաթոշակային ֆոնդը փոխելու մասին դիմումի ձևը սահմանվում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

8. Սույն հոդվածում նշված ժամկետների հաշվարկը կասեցվում է, եթե կենտրոնական բանկի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության կարգավորվող շուկան փակ է:

9. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված պարտավորությունները մասնակիցների ռեեստրը վարողը կարող է իրականացնել տեղեկատվական համակարգի միջոցով՝ մասնակիցների ռեեստրը վարողին ուղղված դիմումի, մասնակիցների ռեեստրը վարողի ինտերնետային կայքի, հաշվի օպերատորի կամ ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ վայրերի միջոցով:

10. ՀՀ կառավարության որոշմամբ կարող է սահմանվել առավելագույնը մեկ տարի ժամանակահատված, որի ընթացքում կարգելվի կենսաթոշակային ֆոնդերի փոփոխությունը և նոր կենսաթոշակային ֆոնդերի ընտրությունը՝ պայմանավորված ֆինանսական կայունության և ֆինանսական շուկայում ստեղծված խուճապային իրավիճակը զսպելու անհրաժեշտությամբ:

## Գլուխ 8

## Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրումը

### Հոդված 41. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրման սկզբունքները

1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները կարող են ներդրվել բացառապես սույն օրենքի և սույն օրենքի համաձայն ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են իրենց կողմից կառավարվող յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդում ունենալ առնվազն 1% մասնակցություն սեփական ակտիվներից: Սույն պարբերությամբ սահմանված նվազագույն չափը նվազելու դեպքում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է 1 ամսվա ընթացքում լրացնել 1% յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդում մասնակցության չափանիշը:

2. Նպատակ ունենալով առավելագույնի հասցնել ներդրումների արդյունավետությունը՝ հօգուտ պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցների, ներդրումները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա՝

1) պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների ապահովություն,

2) ռիսկերի դիվերսիֆիկացիա,

3) համարժեք իրացվելիության ապահովում:

3. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրումը սույն հոդվածի 1-ին մասում նշվածներից այլ նպատակներով ու սկզբունքների հիման վրա, կհամարվի կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ստանձնած պարտավորությունների խախտում:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ներդնել ռիսկերի կառավարման այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա ցանկացած ժամանակ հսկել և գնահատել ռիսկերը և դրանց բաժինը կենսաթոշակային ֆոնդի ընդհանուր ռիսկի մեջ:

Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

### Հոդված 42. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի նկարագրությունը

1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերն են՝

1) հավասարակշռված ֆոնդ, որի պորտֆելը բաղկացած է նվազագույնը՝ 50 տոկոս կայուն եկամտային ներդրումից (պարտատոմսեր) և առավելագույնը՝ 50 տոկոս բաժնետոմսերից.
2) պահպանողական (կոնսերվատիվ) ֆոնդ, որի պորտֆելը բաղկացած է նվազագույնը՝ 75 տոկոս կայուն եկամտային ներդրումից (պարտատոմսեր) և առավելագույնը՝ 25 տոկոս բաժնետոմսերից.
3) կայուն եկամտային ֆոնդ, որի պորտֆելը պետք է բաղկացած լինի 100 տոկոս կայուն եկամտային ներդրումից (պարտատոմսեր):

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարտավոր են յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի համար Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացնել ներդրումային ծրագիր, որը կնախատեսի՝
1) սույն օրենքով նախատեսված պահանջների կատարման եղանակը,
2) ակտիվների տեսակը, որոնցում կենսաթոշակային ակտիվները պետք է ներդրվեն,
3) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից ներդրումների հետ կապված որոշումների ընդունման և դրանց իրագործման համար պատասխանատու կողմերը,
4) ներդրումների հետ կապված որոշումներ ընդունելու համար նախատեսված ընթացակարգերը,
5) ներդրումային ծրագիրը վերանայելու կարգը և պայմանները:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի համար ձեռքբերված ակտիվները պետք է բավարարեն սույն օրենքի պահանջները:

Կենսաթոշակային ֆոնդի յուրաքանչյուր կառավարիչ պարտավոր է առաջարկել պահպանողական ֆոնդ:

3. Կենտրոնական բանկը կարող է ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք լրացուցիչ պահանջներ կսահմանեն կենսաթոշակային ֆոնդերի համար:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից գրանցված յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդ պետք է նույն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի գրանցված այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերից տարբերվի առնվազն 15% բաժնետոմսերի չափաբաժնով:

### Հոդված 43. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների թույլատրելի ներդրումները

1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում:

2. Արտասահմանում պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները կարող են ներդրվել՝

1) Տնտեսական Համագործակցության և Զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) պետությունների բանկային համակարգը կարգավորողի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ավանդներում և բանկային հաշիվներում,

2) ՏՀԶԿ պետությունների կողմից թողարկված արժեթղթերում,

3) ՏՀԶԿ պետությունների կապիտալի շուկան կարգավորող լիազորված մարմնի կողմից գրանցված և նրանց կարգավորման ներքո գտնվող կարգավորվող շուկայում ցուցակված արժեթղթերում,

4) ՏՀԶԿ պետությունների կապիտալի շուկան կարգավորող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող ներդրումային ֆոնդի փայերում (բաժնետոմսերում):

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել արտասահմանյան ընկերությունների վարկանիշների որոշման համակարգեր, որոնցում թույլատրելի կլինեն պարտադիր կուտակային ակտիվների ներդրումները, :

3. Հայաստանի Հանրապետության տարածքում պարտադիր կուտակային ակտիվները կարող են ներդրվել հետևյալ ակտիվներում՝

1) կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերի բանկային հաշիվներում և ավանդներում, եթե տվյալ բանկի լիցենզիան չի կասեցված կամ դադարեցված,

2) Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերում,

3) Հայաստանի Հանրապետության կամ այլ երկների կարգավորվող շուկայում ցուցակված, կապիտալի շուկան կարգավորող Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնում գրանցված՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց արժեթղթերում,

4) այն ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված արժեթղթերում, որոնք վերահսկվում են կապիտալի շուկան կարգավորող Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբական անձանց վարկանշման չափանիշներ, որոնցում թույլատրելի կլինեն պարտադիր կուտակային ակտիվների ներդրումները:

**Հոդված 44. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրման սահմանափակումները**

1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները սույն օրենքի 43-րդ հոդվածում թվարկված ֆինանսական գործիքներում կարող են ներդրվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված քանակային և արժութային սահմանափակումների շրջանակներում:

2. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները չեն կարող ներդրվել`

1) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց կողմից թողարկվող (թողարկված) արժեթղթերում,

2) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի աուդիտորի, ինչպես նաև դրա հիմնադիրների (մասնակիցների) կողմից թողարկվող (թողարկված) արժեթղթերում,

3) կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց, ինչպես նաև դրանց հիմնադիրների (մասնակիցների) կողմից թողարկվող (թողարկված) արժեթղթերում,

4) ածանցյալ արժեթղթերում, բացառությամբ հեջավորման նպատակով ներդրումների,

5) չցուցակված արժեթղթերում,

6) այն ակտիվներում, որոնք օրենքով օտարման ենթակա չեն կամ առկա են սահմանափակումներ,

7) անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում, եթե դրանք ցուցակված չեն կարգավորվող շուկաներում կամ եթե դրանց գնահատումը անորոշ է (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, անտիկվար ապրանքներ, թանկարժեք մեքենաներ):

3. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ակտիվները չեն կարող վաճառվել`

1) պահառուին,

2) կենսաթոշակային ֆոնդի կառավարչին,

3) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի կառավարման խորհրդի անդամներին,

4) սույն մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված անձանց հետ փոխկապակցված անձանց:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը և պահառուն չեն կարող մեկը մյուսին, տրամադրել փոխառություններ կամ երաշխավորել պարտավորությունների կատարումը:

5. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ձեռնարկել քայլեր համապատասխանեցնելու ներդրումային գործունեությունը սույն օրենքի պահանջներին և ապահովել հնարավոր առավելագույն շահութաբերություն, պահել ու խնայել կենսաթոշակային ակտիվները, եթե սույն հոդվածի 1-ին մասի հիման վրա սահմանված սահմանափակումները խախտվել են որպես հետևանք`

1) շուկայական գների փոփոխության, որոնք հիմք են հանդիսացել ակտիվների գնահատման համար,

2) արտարժույթի արժեքի փոփոխության,

3) կազմակերպությունների միջև տնտեսական և կազմակերպական հարաբերությունների փոփոխության, որոնց բաժնետոմսերում ներդրվել են կենսաթոշակային ակտիվները,

4) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամքից անկախ և հսկողությունից դուրս այլ հանգամանքների:

6. Սույն օրենքով նախատեսված ներդրումների համապատասխանությունը պետք է ավարտվի ոչ ուշ քան 6 ամսվա

ընթացքում, սկսած այն օրվանից, երբ խախտումը տեղի է ունեցել կամ ակտիվների գնահատման արդյունքում հայտնի է դարձել խախտման մասին:

7. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իր տիրապետության տակ գտնվող որևէ ընկերության քվեարկող բաժնետոմսերով քվեարկել ելնելով բացառապես մասնակիցների շահերից:

8. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված ժամկետների հաշվարկը կասեցվում է, եթե կենտրոնական բանկի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության կարգավորվող շուկան փակ է:

## Գլուխ 9

## Ծառայությունների համար վճարները

### Հոդված 45. Ծառայությունների համար վճարներ կատարելը

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների ծառայությունների համար գանձվում են սույն օրենքով նախատեսված չափով վճարներ` սույն օրենքի 47-րդ հոդվածում նշված կարգով:

2. Մասնակիցների ռեեստրը վարողի կողմից գանձվող վճարների չափը պետք է լինի տնտեսապես հիմնավորված և նրանց համար ապահովի ողջամիտ եկամտաբերություն:

### Հոդված 46. Պահառության համար վճարը

Պահառուի վարձատրությունը կատարվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի միջև կնքված պայմանագրի համաձայն` կենսաթոշակային ֆոնդի կառավարչի հաշվին սույն օրենքի 47-րդ հոդվածում նշված վճարներից:

### Հոդված 47. Կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար վճարները

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը սահմանում է կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար տարեկան վճար, որի մասին հայտնում է կենտրոնական բանկին:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարման համար տարեկան վճարի չափը չպետք է գերազանցի տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարման ներքո գտնվող ակտիվների 1,5%-ը:

### Հոդված 48. Մասնակիցների ռեեստրը վարողի ծառայությունների համար վճարները

1. Սույն օրենքի 47-րդ հոդվածում նշված վճարները ներառում են նաև մասնակիցների ռեեստրը վարողի ծառայությունների համար վճարները:

Մասնակիցները ռեեստրը վարողի ծառայությունների համար վճարի առավելագույն չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության և մասնակիցների ռեեստրը վարողի միջև կնքված պայմանագրով:

2. 12 ամսվա ընթացքում կենսաթոշակային ֆոնդի կառավարչին մեկից ավելի անգամ փոխելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը գանձում և փոխանցում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչին լրացուցիչ վճար, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4րդ մասերում նախատեսված դեպքերի: Յուրաքանչյուր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ սահմանում է փայերի մարման լրացուցիչ վճար, որը չի կարող գերազանցել մարվող փայերի տվյալ օրվա դրությամբ զուտ արժեքի 1%-ը:

3. Լրացուցիչ վճար չի գանձվում, եթե մասնակիցը փոխում է նույն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կենսաթոշակային ֆոնդը մեկ այլ կենսաթոշակային ֆոնդով:

Լրացուցիչ վճար չի գանձվում նաև սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրության դեպքում:

4. Հերթական կուտակային վճարներ կատարելու դեպքում մասնակիցն իրավունք ունի ընտրել նույն կամ այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի այլ կենսաթոշակային ֆոնդ, որի համար լրացուցիչ վճար չի գանձվում:

5. Մասնակիցներից մասնակիցների ռեեստրը վարողին ուղղված սույն օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կամ ժառանգության ձևակերպման վերաբերյալ դիմումի համար մասնակցից կամ նրա ժառանգից

գանձվում է վճար, որը չի կարող լինել ավելի, քան մասնակիցների ռեեստրի կողմից այդ նպատակով կատարվող ծախսերի և ողջամիտ շահութաբերության հանրագումարը:

## Գլուխ 10

## Կուտակային կենսաթոշակների վճարումը

### Հոդված 49. Կուտակային կենսաթոշակների տեսակները

1. Կուտակային կենսաթոշակների տեսակներն են`

1) անուիտետները,

2) ծրագրային վճարները,

3) միանվագ վճարները:

2. Կուտակային կենսաթոշակի չափը որոշվում է մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա ակտիվների և կուտակային կենսաթոշակների ստացման ժամանակահատվածի հիման վրա:

3. Անուիտետների և ծրագրային վճարների հաշվարկման համար մասնակիցների ռեեստրը վարողը և ապահովագրական ընկերությունները պետք է օգտագործեն երկու սեռի համար ունիվերսալ մահացության աղյուսակներ:

4. Կուտակային կենսաթոշակների վրա բռնագանձում կարող է տարածվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

### Հոդված 50. Մասնակցի պարտադիր կուտակային կենսաթոշակների ստացման կարգը կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո

1. Մասնակիցը կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերում, եթե` լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը: Մանսակիցը կարող է տնօրինել իր պարտադիր կուտակային կենսաթոշակը անկախ պետական կենսաթոշակը ստանալու փաստից: Մասնակիցը կարող է օգտագործել պարտադիր կուտակային միջոցները կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո ցանկացած պահի կամ ընդհանրապես չօգտագործել:

2. Մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում մասնակիցը դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին իր կենսաթոշակային հաշվում առկա կուտակային կենսաթոշակային ակտիվների վերաբերյալ տեղեկանք ստանալու վերաբերյալ: Դիմումի ձևը սահմանվում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

3. Հաշվի առնելով մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա կուտակային կենսաթոշակային ակտիվների մեծությունը այն կարող է տնօրինվել հետևյալ կերպ.

ա) եթե մասնակցի միջոցները անուիտետի վերածված ամսական գումարը փոքր է հիմնական (բազային) կենսաթոշակի 25%-ից կամ հավասար դրան, ապա մասնակիցն իրավունք ունի կուտակված միջոցները ստանալ ծրագրային վճարումների ձևով կամ միանվագ,

բ) եթե մասնակցի միջոցները անուիտետի վերածված ամսական գումարը մեծ է հիմնական (բազային) կենսաթոշակի 25%-ից, բայց փոքր այդ կենսաթոշակի հնգապատիկից, ապա մասնակիցը պարտավոր է տնօրինել իր միջոցներն անուիտետի գնման ձևով,

գ) եթե մասնակցի միջոցները անուիտետի վերածված ամսական գումարը գերազանցում է հիմնական (բազային) կենսաթոշակի հնգապատիկը, ապա մասնակիցը վճարում է միջոցների մի մասը` հիմնական (բազային) կենսաթոշակի հնգապատիկը ապահովող անուիտետ գնելու նպատակով, իսկ մնացած մասը` իրավունք ունի տնօրինել ծրագրային վճարների ձևով կամ ստանալ միանվագ:

Իր ընտրության վերաբերյալ դիմումը մասնակիցը պարտավոր է ներկայացնել մասնակիցների ռեեստրը վարողին:

4. Անուիտետ ստանալու իրավունքը ծագում է անկախ այն հանգամանքից, անուիտետ ստացողը այլ աղբյուրներից անուիտետ, պետական կենսաթոշակ և/կամ նպաստ ստանում է, թե ոչ:

**Հոդված 51. Կենսաթոշակային հաշվի դրամական միջոցների ապահովագրական ընկերությանը փոխանցելը**

1. Մասնակիցը գրավոր դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին տեղեկացնելով ընտրված ապահովագրական ընկերության և անուիտետի պայմանագրի, ինչպես նաև փայերը մարելու և ձևավորված դրամական միջոցները ապահովագրական ընկերությանը փոխանցելու մասին: Դիմումի ձևը ինչպես նաև դրան կից ներկայացվող փաստթղթերի ցանկը սահմանվում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

2. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է մարման պահանջի մասին տեղեկացնել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և 30 օրվա ընթացքում մարել թողարկված փայերը, կենսաթոշակային ֆոնդի կառավարչից ստացված դրամական միջոցները փոխանցել մասնակցի՝ դիմումում մատնանշված ապահովագրական ընկերությանը:

3. Դրամական միջոցները փոխանցելու ուշացման դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցին վճարում է տույժ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

4. Ապահովագրական ընկերությունն իր հետ պայմանագիր կնքած մասնակցին գրավոր տեղեկացնում է մասնակիցների ռեեստրը վարողից դրամական միջոցների ստացման և դրանց չափի մասին՝ ստանալու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում:

**Հոդված 52. Անուիտետների տեսակները**

1. Անուիտետի տեսակներն են՝

1) 10 կամ 5 տարի ժամանակով երաշխավորված անուիտետ (այսուհետ՝ որոշակի ժամանակով երաշխավորված անուիտետ),

2) ամուսինների անուիտետ՝ 10 կամ 5 տարի երաշխավորված ժամկետով:

2. Որոշակի ժամանակով երաշխավորված անուիտետը վճարվում է ցմահ, սակայն վճարումները երաշխավորվում են կենսաթոշակի նշանակման օրից սկսած նվազագույնը 10 կամ 5 տարվա համար (որոշակի ժամանակահատված): Եթե անձը մահանում է նախքան 10 կամ 5 տարի նվազագույն ժամանակահատվածը լրանալը, ապա անուիտետի պայմանագրում նշված շահառուները կամ օրենքով ժառանգ համարվող անձինք իրավունք ունեն ապահովագրական ընկերությունից ետ ստանալ որոշակի ժամանակով երաշխավորված անուիտետի մնացորդային գումարը:

3. Ամուսինների անուիտետը վճարվում է ցմահ՝ այն անձին, հօգուտ որի այն նշանակվել է: Անձի մահից հետո, անուիտետը շարունակվում է վճարվել վերջինիս ողջ մնացած ամուսնուն ցմահ՝ անուիտետի պայմանագրում նախատեսված գումարի չափով: Եթե ամուսիններից երկուսն էլ մահանում են երաշխիքային ժամանակահատվածում, նրանց ժառանգները ստանում են չվճարված գումարի որոշակի մասը:

4. Անուիտետի վճարման պայմանագրից բխող պարտավորական իրավունքները չեն կարող գրավադրել որպես մեկ այլ պարտավորության կատարման ապահովման միջոց:

**Հոդված 53. Անուիտետի պայմանագիր կնքելը**

1. Ապահովագրական ընկերությունը մասնակցի կենսաթոշակային հաշվից իրեն միանվագ փոխանցված դրամական միջոցների դիմաց մասնակցին վճարում է անուիտետ: Ապահովագրական ընկերությունը պարտավոր է անուիտետի պայմանագիր կնքել յուրաքանչյուր մասնակցի հետ, ով ընտրել է տվյալ ապահովագրական ընկերության որևէ անուիտետ (հրապարակային պայմանագիր):

2. Մասնակիցն ու ապահովագրական ընկերությունը կնքում են անուիտետի վճարման պայմանագիր՝ հաշվի առնելով սույն օրենքով և դրանից բխող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

3. Անուիտետ վճարելու մասին պայմանագիր կնքելու համար մասնակիցը ապահովագրական ընկերություն է ներկայացնում (գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տրամադրած տեղեկանքը մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա դրամական միջոցների վերաբերյալ: Կենսաթոշակային հաշվի հաշվեկշիռը հաշվվում է կուտակային բաղադրիչին մասնակցելու օրվանից սկսած մինչև մասնակիցների ռեեստրը վարողին դիմում ներկայացնելու օրը:

4. Անուիտետի պայմանագիր կնքելիս ապահովագրական ընկերությանն արգելվում է մասնակցից պահանջել վերջինիս առողջական վիճակի վերաբերյալ կամ հիվանդության պատմությունից որևէ տեղեկատվություն:

5. Անուիտետի պայմանագրում նշվում են՝

1) անուիտետի տեսակը,

2) մասնակցի տարիքը,

3) ապահովագրական ընկերությանը միանվագ փոխանցված գումարի չափը,

4) վճարման ենթակա անուիտետի չափը, ժամկետը և վճարման պարբերականությունը,

5) անուիտետի պայմանագրի դադարման հիմքերը և պայմանները,

6) պատասխանատվությունը անուիտետի պայմանագրի պայմանները խախտելու դեպքում,

7) օրենքով սահմանված այլ պայմաններ:

6. Անուիտետի պայմանագրում, բացի սույն օրենքով և կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով նախատեսված էական պայմանները, կողմերի հայեցողությամբ կարող են նախատեսվել սույն օրենքին և կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտին չհակասող այլ դրույթներ:

**Հոդված 54. Անուիտետի պայմանագրի դադարելը**

1. Անուիտետի պայմանագիրը դադարում է անուիտետ ստացող անձի մահվան, իսկ ամուսինների անուիտետի պայմանագրի դեպքում՝ երկրորդ ամուսնու մահվան դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Երաշխավորված ժամկետում անուիտետ ստացող անձանց մահվան դեպքում անուիտետի պայմանագիրը դադարում է մնացորդային գումարը ժառանգներին՝ սույն օրենքով սահմանված կարգով վճարելու դեպքում:

3. Ապահովագրական ընկերության կողմից 2 անգամ անընդմեջ անուիտետ չվճարելու դեպքում անուիտետ ստացող անձը կամ նրա ամուսինն իրավունք ունեն դադարեցնել պայմանագիրը կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով՝ պահանջելով ապահովագրական ընկերությունից կորցրած եկամուտը:

4. Սույն հոդվածի 3–րդ մասում նախատեսված հիմքով անուիտետի պայմանագիրը դադարելու դեպքում մնացորդային գումարի հաշվարկման և այլ ապահովագրական ընկերություն փոխանցման կարգը սահմանվում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

**Հոդված 55. Ծրագրային վճար**

1. Սույն օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում կուտակային կենսաթոշակը կարող է վճարվել ծրագրային վճարի տեսքով:

2. Ծրագրային վճարը մասնակցի կենսաթոշակային հաշվում կուտակված միջոցների հաշվին ամսական կտրվածքով վճարվող կենսաթոշակ է՝ բաշխված ըստ կյանքի սպասվող տևողության ամիսների:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է ծրագրային վճարների հաշվարկման մեթոդաբանությունը:

**Հոդված 56. Միանվագ վճար**

1. Միանվագ վճարում կատարվում է՝

1) անուիտետ ձեռք բերելուց հետո մասնակցի կենսաթոշակային հաշվի մնացորդը,

2) սույն օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով նախատեսված դեպքում,

3) նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը անձին օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելու դեպքում՝ կենսաթոշակային հաշվի ամբողջ հաշվեկշռի չափով,

4) առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելու դեպքում՝ կենսաթոշակային հաշվի ամբողջ հաշվեկշռի չափով,

5) սույն օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված չափով՝ մասնակցի մահվան դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում իրավատերը (մասնակիցը, ժառանգը կամ այլ իրավազոր ֆիզիկական անձը) դիմում է ներկայացնում մասնակիցների ռեեստրը վարողին՝ նշելով միանվագ վճար կատարելու հիմքը:

Դիմումի ձևը սահմանվում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

3. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է դիմումն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում մարել թողարկված փայերը, դրանք վերածել դրամական միջոցների և կատարել միանվագ վճար:

4. Միանվագ վճար կատարելու՝ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված ժամկետի ուշացման դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը վճարում է տույժ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

5. Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ վճար կարող է կատարվել նաև՝

1) եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին մշտական բնակության նպատակով մեկնում է արտասահման և հրաժարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից,

2) Հայաստանում աշխատող օտարերկրացիներին, ովքեր վերադառնում են իրենց մշտական բնակության երկիր:

Միանվագ վճարները կարող են կատարվել միայն անկանխիկ փոխանցման միջոցով մեկնած երկրում իր գործող պարտադիր կուտակային կենսաթոշակային հաշվին: Եթե մեկնած երկրներում չկա գործող պարտադիր կուտակային համակարգ, ապա Հայաստանում կուտակված միջոցները չեն փոխանցվում այլ երկիր, և սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված անձինք կկարողանան ստանալ Հայաստանում կուտակած իրենց կենսաթոշակային ակտիվները սույն օրենքով սահմանված կարգով:

Սույն կետում նշված միանվագ վճարների կատարման կարգը և այլ պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

## Գլուխ 11

## Կուտակային ակտիվների ժառանգումը

### Հոդված 57. Կուտակային ակտիվների ժառանգումը

1. Կուտակային ակտիվների ժառանգման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

2. Կուտակային ակտիվները կարող են ժառանգության կարգով փոխանցվել միայն ֆիզիկական անձանց և Հայաստանի Հանրապետությանը:

3. Ժառանգվել կարող են ինչպես նախքան կուտակային կենսաթոշակ ստանալը մասնակցի մահվան դեպքում նրա կենսաթոշակային հաշվում կուտակված միջոցները, այնպես էլ կուտակային կենսաթոշակ ստանալու ժամանակահատվածում մահացած կենսաթոշակառուի ժառանգման ենթակա կուտակային միջոցները:

4. Ժառանգություն ստացած կուտակային ակտիվները ժառանգներին վճարվում են միանվագ վճարի տեսքով, կամ ժառանգի կենսաթոշակային հաշվին փոխանցելու ձևով:

Եթե ժառանգվող կուտակային ակտիվները պակաս են հիմնական (բազային) կենսաթոշակի քանհինգապատիկից, ապա կուտակային ակտիվները վճարվում են ժառանգներին միանվագ վճարի տեսքով: Եթե կուտակային ակտիվների չափը մեծ է հիմնական (բազային) կենսաթոշակի քանհինգապատիկից, ապա բազային (հիմնական) կենսաթոշակի քանհինգապատիկի չափով գումարը վճարվում է միանվագ, իսկ գերազանցող գումարը փոխանցվում է ժառանգի կենսաթոշակային հաշվին, եթե նա պարտադիր կուտակային համակարգի մասնակից է: Ժառանգորդը ստանում է ժառանգատուի հաշվում գտնվող փայերը: Եթե ժառանգորդը ցանկանում է ժառանգված փայերը փոխանակել իր հաշվում գտնվող փայերի, ապա պարտավոր է լրացնել և ռեեստրը վարողին ներկայացնել սույն օրենքի 38 հոդվածի 2-րդ մասով սահմանված դիմումը:

Ժառանգորդի պարտադիր կուտակային համակարգի անդամ չլինելու դեպքում մասնակիցների ռեեստր վարողը պարտավոր է բացել ժառանգորդի համար կենսաթոշակային հաշիվ և ժառանգված կուտակային ակտիվները փոխանցել այդ կենսաթոշակային հաշվին՝ անկախ ժառանգորդի տարիքից: Եթե ժառանգորդը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի և չունի մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացված կենսաթոշակային հաշիվ, ապա նա գումարը տնօրինում է սույն օրենքով սահմանված կարգով՝ միանվագ վճարների տեսքով: Այդ պահից սկսած ժառանգը ձեռք է բերում սույն օրենքով սահմանված բոլոր իրավունքները և կրում է սույն օրենքով սահմանված բոլոր պարտականությունները, բացառությամբ պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտականությունից:

5. Եթե ժառանգատուն չունի ժառանգ, ապա նրան պատկանող փայերը մարվում են մասնակիցների ռեեստրը վարողի կողմից և ձևավորված դրամական միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի կանոնները կիրառվում են նաև այն կուտակային ակտիվների նկատմամբ, որոնց սեփականատերերին 3 տարի չի հաջողվել պարզել և որոնք չեն մուտքագրվել որևէ մեկի կենսաթոշակային հաշվին:

**Հոդված 58. Կուտակային ակտիվների ժառանգման կարգը**

1. Ժառանգության վկայականը ստանալու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում ժառանգորդը պարտավոր է դիմում ներկայացնել մասնակիցների ռեեստրը վարողին ժառանգություն ստացած փայերի մարման և ձևավորված դրամական միջոցներն իր կենսաթոշակային հաշվին փոխանցելու կամ միանվագ ստանալու մասին: Դիմումի հետ միասին ժառանգորդը պարտավոր է ներկայացնել նաև ժառանգության վկայականի պատճենը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված դիմումը կարող է ներկայացվել թղթային և էլեկտրոնային եղանակներով: Դիմումի ձևը սահմանում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) ժառանգորդի անունը և ազգանունը, անձնագրի սերիան և համարը,

2) ժառանգորդի սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, բացառությամբ այն դեպքի եթե անձը հանդիսանում է օտարերկրյա քաղաքացի

3) ժառանգորդի կոնտակտային տվյալները (հեռախոս, էլ. փոստի հասցե և այլն)

4) ժառանգորդի՝ մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն (նամակ, էլեկտրոնային հաղորդագրություն և այլն) ստանալու նախընտրելի միջոցը,

5) ժառանգատուի անունը և ազգանունը,

6) ժառանգատուի սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը,

7) ժառանգորդի կողմից ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անվանումը և կենսաթոշակային ֆոնդը,

8) հավաստում այն մասին, որ համաձայն է սույն մասի 7-րդ կետում նշված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարման վճարների և ֆոնդի կանոնների հետ,

9) հավաստում այն մասին, որ պահանջում է փայերի հետգնում և կուտակային ակտիվների միանվագ վճարում՝ նշելով իր անհատական բանկային հաշվի վավերապայմանները,

10) ժառանգության վկայականի վավերապայմանները,

11) դիմումի ներկայացման տարին, ամիսը և ամսաթիվը,

12) ժառանգորդի (ժառանգորդի լիազոր ներկայացուցչի) ստորագրությունը, բացառությամբ, այն դեպքերի, երբ դիմումը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, որն ապահովում է անձի նույնականացումը:

Եթե ժառանգորդը դիմում է ներկայացրել կուտակային կենսաթոշակային ակտիվներն սույն օրենքին համապատասխան ամբողջությամբ իր կենսաթոշակային հաշվին փոխանցելու մասին, ապա սույն մասի 9-րդ ենթակետով նախատեսված տեղեկությունները չեն լրացվում:

Եթե ժառանգորդը դիմում է ներկայացրել ժառանգված կուտակային ակտիվները սույն օրենքին համապատասխան ամբողջությամբ միանվագ ստանալու մասին, ապա չեն լրացվում սույն կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված տեղեկությունները:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված դիմումը չի կարող հետ կանչվել կամ փոփոխվել:

4. Եթե ժառանգորդը դիմում է ներկայացրել ժառանգած կենսաթոշակային ակտիվներն իր կենսաթոշակային հաշվին փոխանցելու մասին, ապա այդ դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները:

5. Սույն հոդվածի 1-ին մասի սահմանված դիմումը ներկայացնելուց հետո մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է իրականացնել այդ գործընթացը և դիմումը ստանալուց հետո 1 ամսվա ընթացքում կատարել դիմումում նշված գործողությունները:

6. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված դիմումը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում կենսաթոշակային ակտիվները շարունակում են մնալ նույն կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կառավարման ներքո մինչև 3 տարի ժամանակով: Երեք տարվա ընթացքում դիմում չներկայացնելու դեպքում փայերը վերացվում են, իսկ կենսաթոշակային ակտիվները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

### Հոդված 59. Կուտակային կենսաթոշակային ակտիվների ժառանգման մասին դիմումը մերժելը

1. Մասնակիցների ռեեստրը վարողն իրավունք ունի մերժել սույն օրենքի 58-րդ հոդվածում նախատեսված դիմումը, եթե դիմումը չի համապատասխանում 58-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Դիմումը մերժելու և դրա պատճառների մասին մասնակիցների ռեեստրը վարողը գրավոր տեղեկացնում է դիմում ներկայացրած ժառանգորդին:

2. Պարտադիր կուտակային ակտիվները ժառանգելու համար ժառանգորդը պարտավոր է ներկայացնել նոր դիմում, որը կհամապատասխանի սույն օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

## Գլուխ 12

## Կամավոր կենսաթոշակային բաղադրիչ

### Հոդված 60. Կամավոր կուտակային բաղադրիչի գործունեության սկզբունքները

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կամավոր կուտակային բաղադրիչը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր մասնակցություն,

2) կամավոր կուտակային բաղադրիչին մասնակցության դեպքում՝ հարկային արտոնությունների տրամադրում:

Կամավոր կուտակային սխեմաները լինում են հետևյալ տեսակների

1) սահմանված կենսաթոշակներ,

2) կուտակային կենսաթոշակային ավանդներ,

3) սահմանված կենսաթոշակային վճարներ:

**Հոդված 61. Կամավոր կենսաթոշակային գործունեություն իրականացնելը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում միայն բանկերը, ապահովագրական ընկերությունները և կամավոր կենսաթոշակային ֆոնդերը (կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները) իրավունք ունեն իրականացնել կամավոր կենսաթոշակային գործունեություն և ֆիզիկական ու իրավաբանական անձանց առաջարկել կամավոր կենսաթոշակային սխեմաներ:

2. Կամավոր կենսաթոշակների պայմանագրի սուբյեկտ կարող է լինել գործատուն, որը կամավոր կենսաթոշակի պայմանագիր է կնքում իր աշխատակիցների օգտին, ինչպես նաև ֆիզիկական անձը, ով իրավունք ունի կամավոր կենսաթոշակի պայմանագիր կնքել իր և այլ անձանց օգտին:

Գործատուին արգելվում է մասնակցել իր հետ փոխկապակցված ապահովագրական ընկերությունների և ներդրումային ֆոնդերի կողմից առաջարկվող կամավոր կուտակային սխեմաներում:

Մինչև կենսաթոշակային տարիք լրանալը կամավոր կուտակային սխեմաներով հավաքագրված ակտիվները կարող են օգտագործվել սույն օրենքի 56-րդ հոդվածով և 11-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով: Բոլոր այլ դեպքերում կամավոր կուտակային սխեմաների մասնակիցները կարող են օգտագործել այդ սխեմաներով կուտակված միջոցները միայն կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո:

3. Կամավոր կենսաթոշակային ծառայությունները պետք է մատուցվեն պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ` գործելով բարեխղճորեն` ելնելով բացառապես շահառուների շահերից (ֆիդուցիար պարտականություն):

4. Կամավոր կենսաթոշակային գործունեությամբ զբաղվող անձինք պարտավոր են սահմանել կամավոր կենսաթոշակային սխեմաների կանոնները, որոնք պետք է ներառեն կամավոր կուտակային վճարի չափը, կատարման ժամկետը, ակնկալվող կամավոր կենսաթոշակի չափը (սահմանված կենսաթոշակներ սխեմայի դեպքում), ինչպես նաև կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով նախատեսված այլ պայմաններ:

5. Կամավոր կենսաթոշակային գործունեություն իրականացնողների կողմից առաջարկվող յուրաքանչյուր կամավոր կենսաթոշակային սխեմա հաստատվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

6. Կենսաթոշակային կանոնները կարող են փոփոխվել միայն ապագա ժամանակահատվածի համար և դրանք չեն կարող վատթարացնել մասնակիցների/շահառուների կամավոր կենսաթոշակի պայմանները:

**Հոդված 62. Ապահովագրական ընկերության կողմից կամավոր կենսաթոշակային գործունեության իրականացումը**

1. Ապահովագրական ընկերությունները կարող են առաջարկել միայն «սահմանված կենսաթոշակներ» սխեմայով կամավոր կենսաթոշակային ապահովագրություն:

2. Ապահովագրական ընկերության հետ կամավոր կենսաթոշակի պայմանագիրը կնքվում է ցմահ և ժամկետային կենսաթոշակների վճարների վճարման համար:

3. Ապահովագրական ընկերությունը պարտավոր է ունենալ ակտուարական հաշվարկներ իրականացնող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան որակավորում ունեցող ակտուար կամ պայմանագրային կարգով օգտվել նման ակտուարի ծառայություններից:

4. «Սահմանված կենսաթոշակներ» սխեմա առաջարկող ընկերությունները կուտակված միջոցները պետք է ներդնեն պարտավորություններով պայմանավորված: Պարտավորություններով պայմանավորված ներդրումները պետք է ապահովեն ներդրումների չափավոր

ռիսկայնություն, համարժեք իրացվելիություն և ներդրվեն հիմնականում ֆիքսված եկամտաբերության գործիքներում: Ներդրումների նկատմամբ լրացուցիչ պահանջները սահմանվում են ԿԲ նորմատիվ իրավական ակտերով:

5. Ապահովագրական ընկերությունների կողմից կամավոր կուտակային միջոցների տնօրինումն ու օգտագործումն իրականացվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

**Հոդված 63. Բանկերի կողմից կամավոր կենսաթոշակային գործունեության իրականացումը**

1. Բանկերը կարող են առաջարկել միայն «կուտակային կենսաթոշակային ավանդներ» կամավոր կենսաթոշակային սխեմաներ:

2. Բանկերի հետ կամավոր կենսաթոշակի պայմանագիրը կնքվում է ժամկետային և միանվագ վճարների տեսքով կենսաթոշակների վճարման համար:

3. Բանկերի կողմից կամավոր կուտակային միջոցների տնօրինումն ու օգտագործումն իրականացվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

**Հոդված 64. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կամավոր կենսաթոշակային գործունեության իրականացումը**

1. Կամավոր կենսթոշակային ֆոնդերը կարող են առաջարկել միայն «սահմանված կենսաթոշակային վճարներ» պայմաններով կամավոր կենսաթոշակային սխեմաներ:

2. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի հետ կամավոր կենսաթոշակի պայմանագիրը կնքվում է ժամկետային և միանվագ վճարների տեսքով կենսաթոշակների վճարման համար:

3. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կամավոր կուտակային միջոցների տնօրինումն ու օգտագործումն իրականացվում է «Ներդրումային հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

**Հոդված 65. Անհատական հաշվառումը «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» կամավոր կուտակային սխեմայում**

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերը յուրաքանչյուր շահառուի/ մասնակցի համար պարտավոր են վարել անհատական հաշվառում՝ «Անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սկզբունքներին համապատասխան:

2. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմային յուրաքանչյուր մասնակցի համար պետք է բացվի անհատական կենսաթոշակային հաշիվ, որում պետք է արտացոլվեն կատարված կամավոր կուտակային վճարները և դրանց ներդրումներից ստացված եկամուտները:

3. Անհատական կենսաթոշակային հաշիվները պետք է արտացոլեն կատարված կամավոր կենսաթոշակային վճարները և ներդրումային եկամուտները:

4. Կամավոր կենսաթոշակային ֆոնդերը պարտավոր են վարել առանձնացված հաշվառում և տարանջատել կենսաթոշակային ակտիվները այլ ակտիվներից:

5. Կամավոր կենսաթոշակային ֆոնդը, առնվազն տարին մեկ անգամ, տեղեկատվություն է տրամադրում մասնակցին նրա անհատական հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին:

6. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված տեղեկատվությունը ներկայացվում է գրավոր, եթե մասնակիցը նախընտրում է տեղեկատվություն ստանալ գրավոր ձևով, նախորդ տարվա համար՝ ոչ ուշ քան մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը:

**Հոդված 66. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայում կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրման սկզբունքները**

1. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայում կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվները կարող են ներդրվել բացառապես սույն օրենքի և սույն օրենքի համաձայն ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

2. Նպատակ ունենալով առավելագույնի հասցնել ներդրումների արդյունավետությունը` հօգուտ «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայում կամավոր կուտակային բաղադրիչի մասնակիցների, ներդրումները պետք է հիմնված լինեն հետևյալ սկզբունքների վրա`

1) կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվների ապահովություն,

2) ռիսկերի դիվերսիֆիկացիա,

3) համարժեք իրացվելիության ապահովում:

3. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայում կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրումը սույն հոդվածի 1-ին կետում նշվածներից այլ նպատակներով ու սկզբունքների հիման վրա, կհամարվի կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ստանձնած պարտավորությունների խախտում:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ներդնել ռիսկերի կառավարման այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա ցանկացած ժամանակ հսկել և գնահատել դիրքերի ռիսկերը և դրանց բաժինը կենսաթոշակային ֆոնդի ընդհանուր ռիսկի մեջ:

Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում է կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

**Հոդված 67. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայում կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվների թույլատրելի ներդրումները**

1. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայի կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվները կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում:

2. Հայաստանի Հանրապետությունում «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայի կամավոր կուտակային ակտիվները կարող են ներդրվել հետևյալ ակտիվներում.

1) բանկային հաշիվներում և ավանդներում, եթե տվյալ բանկը չի գտնվում լիցենզիայի հետ կանչման գործընթացում,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության և կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերում,

3) Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն կազմակերպությունների արժեթղթերում, որոնք ցուցակված են Հայաստանի Հանրապետության կամ ՏՀԶԿ երկրների կարգավորվող շուկայում և գրանցված են կապիտալի շուկան կարգավորող մարմնում,

4) այն ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված արժեթղթերում, որոնք վերահսկվում են կենտրոնական բանկի կողմից:

3. Արտասահմանում «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայի կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվները կարող են ներդրվել`

1) ՏՀԶԿ պետությունների կապիտալի շուկան կարգավորողի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ավանդներում և բանկային հաշիվներում,

2) ՏՀԶԿ պետությունների կողմից թողարկված արժեթղթերում,

3) ՏՀԶԿ պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված արժեթղթերում,

4) ՏՀԶԿ պետությունների կապիտալի շուկան կարգավորող լիազորված մարմնի կողմից գրանցված և նրանց կարգավորման ներքո գտնվող կարգավորվող շուկայում ցուցակված արժեթղթերում,

5) ՏՀԶԿ պետությունների կապիտալի շուկան կարգավորող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված արժեթղթերում,

6) ՌԴ այն արժեթղթերում, որոնք կբավարարեն կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին:

Կենտրոնական բանկի կողմից կարող է սահմանվել այլ երկրների ցանկ, որտեղ կարող են ներդրվել կամավոր կուտակային ակտիվները:

**Հոդված 68. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայում կուտակային կենսաթոշակային ակտիվների ներդրման սահմանափակումները**

1. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայի կուտակային կենսաթոշակային ակտիվները սույն օրենքի 67-րդ հոդվածում թվարկված ֆինանսական գործիքներում կարող են ներդրվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված քանակական և արժութային սահմանափակումների շրջանակում:

2. «Սահմանված կենսաթոշակային վճարումներ» սխեմայի կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվները չեն կարող ներդրվել՝

1) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց կողմից թողարկվող (թողարկված) արժեթղթերում,

2) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի աուդիտորի, ինչպես նաև դրա հիմնադիրների (մասնակիցների) կողմից թողարկվող (թողարկված) արժեթղթերում,

3) կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց, ինչպես նաև դրանց հիմնադիրների (մասնակիցների) կողմից թողարկվող (թողարկված) արժեթղթերում,

4) ածանցյալ արժեթղթերում, բացառությամբ հեջավորման նպատակով ներդրումների,

5) չցուցակված արժեթղթերում,

6) այն ակտիվներում, որոնք օրենքով օտարման ենթակա չեն կամ առկա են սահմանափակումներ,

7) անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում, եթե դրանք ցուցակված չեն կարգավորվող շուկաներում կամ եթե դրանց գնահատումը անորոշ է (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, անտիկվար ապրանքներ, թանկարժեք մեքենաներ):

3. Կամավոր կուտակային կենսաթոշակային ակտիվները չեն կարող վաճառվել՝

1) պահառուին,

2) կենսաթոշակային ֆոնդի կառավարչին,

3) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի կառավարման խորհրդի անդամներին,

4) սույն մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված անձանց հետ փոխկապակցված անձանց:

4. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը և պահառուն չեն կարող մեկը մյուսին, տրամադրել փոխառություններ կամ երաշխավորել պարտավորությունների կատարումը:

5. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է ձեռնարկել քայլեր համապատասխանեցնելու ներդրումային գործունեությունը սույն օրենքի պահանջներին և ապահովել հնարավոր առավելագույն շահութաբերություն, պահել ու խնայել կենսաթոշակային ակտիվները, եթե սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթները խախտվել են որպես հետևանք՝

1) շուկայական գների փոփոխության, որոնք հիմք են հանդիսացել ակտիվների գնահատման համար,

2) արտարժույթի արժեքի փոփոխության,

3) կազմակերպությունների միջև տնտեսական և կազմակերպական հարաբերությունների փոփոխության, որոնց բաժնետոմսերում ներդրվել են կենսաթոշակային ակտիվները,

4) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամքից անկախ և հսկողությունից դուրս այլ հանգամանքների:

6. Սույն օրենքով նախատեսված ներդրումների համապատասխանությունը պետք է ավարտվի ոչ ուշ քան 6 ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ խախտումը տեղի է ունեցել կամ ակտիվների գնահատման արդյունքում հայտնի է դարձել խախտման մասին:

7. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը պարտավոր է իր տիրապետության տակ գտնվող որևէ ընկերության քվեարկող բաժնետոմսերով քվեարկել ելնելով բացառապես մասնակիցների շահերից:

**Հոդված 69. Կամավոր կենսաթոշակային գործունեության լիցենզավորումը**

Բանկերը, ապահովագրական ընկերությունները, կամավոր կենսաթոշակային ֆոնդերը (կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները) կարող են զբաղվել կամավոր կենսաթոշակային գործունեությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված համապատասխանաբար «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրական գործունեության մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով լիցենզիայի հիման վրա՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրեր կնքելու միջոցով:

**Հոդված 70. Գործատուների կողմից տրամադրվող լրացուցիչ (կորպորատիվ) կենսաթոշակներ**

1. Գործատուներն իրենց աշխատակիցներին լրացուցիչ կենսաթոշակներ տրամադրելու նպատակով կարող են կամավոր կենսաթոշակային սխեմաներ ձեռք բերել ապահովագրական ընկերություններից կամ կամավոր կենսաթոշակային ֆոնդերից:

2. Գործատուն, իր աշխատողներին լրացուցիչ կենսաթոշակներ տրամադրելիս, չի կարող ցուցաբերել խտրական մոտեցում: Կորպորատիվ (լրացուցիչ) կենսաթոշակներ կարող են առաջարկվել կամ ամբողջ կոլեկտիվին կամ տվյալ գործատուի աշխատողների որոշակի կատեգորիայի: Արգելվում է լրացուցիչ կենսաթոշակներ տրամադրել բացառապես գործատուի ղեկավար կազմին: Աշխատողների որոշակի կատեգորիայի ներսում բոլոր աշխատողներին պետք է տրամադրվեն հավասար և միօրինակ պայմաններ:

3. Գործատուի կողմից տրամադրվող լրացուցիչ կենսաթոշակը կարող է սահմանվել նաև կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով:

4. Լրացուցիչ կենսաթոշակ ստանալու համար կամավոր կուտակային վճարներ կարող են կատարվել գործատուների, աշխատողների, ինչպես նաև միաժամանակ երկուսի կողմից:

**Հոդված 71. Կենսաթոշակային հաշվում կուտակված կենսաթոշակային ակտիվները փոխանցելը**

Գործատուի լուծարման կամ մասնակցի ու գործատուի միջև աշխատանքային պայմանագրի դադարման դեպքում մասնակիցը կարող է օգտագործել իր կենսաթոշակային հաշվում կուտակված կամավոր կենսաթոշակային ակտիվները սույն օրենքի 61 հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ սահմանված կարգով:

## Գլուխ 13

## Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

**Հոդված 72. Պատասխանատվությունը կուտակային վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար**

1. Սույն օրենքով պարտադիր կուտակային վճար կատարելու պարտավորություն ունեցող անձինք պատասխանատվություն են կրում կուտակային վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար:

Պարտադիր կուտակային վճարը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պարտադիր կուտակային վճար վճարողը (վարձու աշխատողի դեպքում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված պարտադիր կուտակային վճարի գումարի 0.15 տոկոսի չափով:

Եթե սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն կամավոր կերպով պարտադիր կուտակային համակարգին միացած անձը չի հայտնել իր գործատուին (հարկային գործակալին) պարտադիր կուտակային համակարգի մասնակից լինելու մասին, ապա սույն հոդվածի 1-ին մասին երկրորդ պարբերությամբ սահմանված տույժը գործատուի նկատմամբ չի կիրառվում մինչև պարտադիր կուտակային վճարները հավաքագրող և անհատական հաշվառում իրականացնող լիազորված մարմնի կողմից տվյալ անձի պարտադիր կուտակային համակարգին մասնակցության փաստի մասին տեղեկացվելը:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված պարտադիր կուտակային վճարի գումարների նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Պարտադիր կուտակային վճարներ չկատարելու կամ ուշացումով կատարելու համար գանձված տույժերի 50%-ը հաշվեգրվում է այն անձի հաշվին, ում համար որ չի կատարվել կամ ուշացումով է կատարվել պարտադիր կուտակային վճարը, իսկ 50% հաշվեգրվում է պետական բյուջե:

2. Կուտակային վճարների վճարումն ուշացնելու դեպքում Պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազոր մարմինը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի, կուտակային վճարի վճարման համար սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում սահմանված կարգով գործատուին անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան:Ընդ որում, այդ հայցից լիազոր մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ չկատարված կուտակային վճարներն ամբողջությամբ մարված չեն:

Կուտակային վճարների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազորված մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ գործատուի գույքը բռնագանձելու նպատակով:

Չվճարված կուտակային վճարների գումարի, ինչպես նաև դրա նկատմամբ հաշվարկված տույժի չափը 500.000 և ավելի դրամ կազմելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազորված մարմնի ղեկավարն իրավունք ունի գործատուի՝ կուտակային վճարների չվճարված գումարին և դրա նկատմամբ հաշվարկված տույժի գումարին համարժեք գույքի վրա արգելանք դնելու մինչև դատարանի կողմից վճռի կայացումը, բացառությամբ օրենքով սահմանված այն գույքի, որի նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը չի գերազանցում 30 օրը:

Սույն մասով նախատեսված արգելանքն առաջնահերթության կարգով կիրառվում է նախ՝ գործատուի բանկային հաշիվների նկատմամբ, ապա՝ անշարժ գույքի, այնուհետև՝ այլ ակտիվների նկատմամբ:

Դատարանի վճռից հետո պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազորված մարմինը ապահովում է բռնագանձված գույքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազորված մարմնի կողմից գործատուի գույքի արգելադրումից հետո՝ 30-օրյա ժամկետում, դատարանի վճիռը չապահովելու դեպքում գործատուի գույքը համարվում է արգելանքից հանված:

Որպես չկատարված կուտակային վճարների կատարման ապահովման միջոց՝ պարտադիր կուտակային վճարների հավաքագրում և անհատական (անձնավորված) հաշվառում իրականացնող պետական լիազորված մարմնի և գործատուի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով»:

**Հոդված 73. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի պատասխանատվությունը**

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն, հաշվի օպերատորը և մասնակիցների ռեեստրը վարողն իրենց գործառույթներն իրականացնում են բարեխղճորեն՝ բացառապես ի շահ մասնակցի: Նրանք

պարտավոր են գործել ֆինանսական կամ նմանատիպ այլ հարցերին ողջամտության սահմաններում լավատեղյակ անձի փորձառությամբ: Նման փորձառության պակասի դեպքում նրանք պետք է օգտվեն փորձագետների ծառայություններից:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն, հաշվի օպերատորը և մասնակիցների ռեեստրը վարողը համապարտ պատասխանատվություն է կրում նաև այն անձի թույլ տված խախտումների համար, ում փոխանցել է իր գործառույթների մի մասի իրականացումը:

3. Սույն օրենքի խախտում է համարվում, սակայն ստորև ներկայացվածով չի սահմանափակվում, եթե`

1) խախտվել են սույն օրենքի, այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները,

2) սույն օրենքի խախտմամբ իրականացվել կամ թույլատրվել են ներդրումներ կամ այլ ծախսեր,
3) սույն օրենքի խախտմամբ կնքվել են ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ,
4) չեն կատարվել կամ ոչ պատշաճ են կատարվել պարտադիր կուտակային ակտիվների հետ կապված պայմանագրերով նախատեսված պարտավորությունները,
5) փոխկապակցված անձի հետ պայմանագրի կնքելը,
6) կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն և մասնակիցների ռեեստրը վարողի կողմից սույն օրենքի իմաստով խախտում է համարվում իր հաշվին կամ իր կամ իրեն փոխկապակցված անձանց օգտին պարտադիր կուտակային ակտիվների կամ դրանց մասին տեղեկատվության օգտագործելը,
7) խախտվել են անհատական հաշվառում վարելու կանոնները, ֆինանսական կամ այլ հաշվետվությունների ներկայացման կամ հրապարակման կարգը կամ պայմանները կամ այդ փաստաթղթերում ներկայացվել են կեղծ, թերի կամ անարժանահավատ տվյալներ,
8) չի կատարել Կենտրոնական բանկի կողմից սույն օրենքով սահմանված կարգով տրված հանձնարարականները,
9) պետական գրանցման և (կամ) լիցենզավորման համար կենտրոնական բանկ են ներկայացվել անարժանահավատ, կեղծ կամ թերի տեղեկություններ:

**Հոդված 74. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարների պատասխանատվությունը**

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարները պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն` ելնելով մասնակիցների շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն իրենց պարտականությունները բարեխղճորեն և խելամտորեն:

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետեւանքով մասնակիցներին պատճառված վնասի համար` Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Եթե վնաս պատճառած արարքն իրականացրել են կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք մասնակիցների առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում սույն օրենքի 75-րդ և 78-րդ հոդվածներով նախատեսված դեպքերը:

**Հոդված 75. Պատժամիջոցները սույն օրենքը խախտելու համար**

1. Սույն օրենքի 73-րդ հոդվածով սահմանված դեպքերում կենտրոնական բանկը խախտումը հայտնաբերելու օրվանից երեք ամսվա ընթացքում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի կամ նրա ղեկավարի նկատմամբ կարող է կիրառել հետևյալ պատասխանատվության միջոցները`

1) նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական կամ նախազգուշացում և ապագայում նման խախտում չկրկնելու հանձնարարական կամ նախազգուշացում և ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական,

2) տուգանք,

3) վերահսկվողի ղեկավարին կամ պատասխանատու անձին որակավորման վկայականից զրկում,

4) թույլտվության ուժը կորցրած ճանաչում:

2. Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը կենսաթոշակային ֆոնդի կառավարչին, պահառուին և մասնակիցների ռեեստրը վարողին և նրանց ղեկավարներին չի ազատում օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրերով նախատեսված պարտականությունների կատարումից:

3. Կենտրոնական բանկը պարտավոր է կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի, նրանց ղեկավարների նկատմամբ սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոց (միջոցներ) կիրառելու մասին որոշումը հրապարակել իր ինտերնետային տնային էջում:

### Հոդված 76. Նախազգուշացում

1. Նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տված խախտումը, և խախտում թույլ տված կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը կամ պահառուն կամ մասնակիցների ռեեստրը վարողը կամ հաշվի օպերատորը տեղեկացվում են խախտման անթույլատրելիության մասին:

2. Նախազգուշացումը նախատեսում է նաև թույլ տված խախտումը կենտրոնական բանկի սահմանած ժամկետում վերացնելու և (կամ) ապագայում նման խախտումը չկրկնելու հանձնարարական և (կամ) ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական: Թույլ տրված խախտումը վերացնելու կամ չկրկնելու հանձնարարականով կամ ապագայում նման խախտումը բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով կարող է նախատեսվել նաև կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, հաշվի օպերատորի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի կողմից կնքվող որոշակի գործարքների և (կամ) գործառնությունների դադարեցում և (կամ) դրանց պայմանների փոփոխություն: Հանձնարարականի կատարումը պարտադիր է նախազգուշացում ստացածի համար:

3. Նախազգուշացումը՝ որպես պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել սույն օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

### Հոդված 77. Տուգանք

1. Տուգանքը՝ որպես պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել սույն օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 5-րդ, 6-րդ, և 8-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև սույն օրենքի 76-րդ հոդվածով սահմանված դեպքերում մեկ օրացուցային տարվա ընթացքում 2-ից ավել անգամ պատասխանատվության ենթարկելու դեպքում:

2. Այնպիսի խախտումների դեպքում, որոնց հետևանքով գույքային վնաս է պատճառվել մասնակիցներին, յուրաքանչյուր խախտման համար տուգանքի չափը պետք է ներառի մասնակիցներին պատճառված վնասը և տոկոսադրույքները:

3. Այնպիսի խախտումների դեպքում, որոնց հետևանքով գույքային վնաս չի պատճառվել մասնակիցներին, սակայն խախտվել են հաշվետվություններ ներկայացնելու, ինչպես նաև սույն օրենքով սահմանված այլ պահանջներ, ապա տուգանքի չափը յուրաքանչյուր խախտման համար չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը, բացառությամբ սույն օրենքի 10-րդ և 18-րդ հոդվածների 6-րդ մասերով սահմանված դրույթների խախտման դեպքում:

Տուգանքի չափը որոշելիս տուգանք կիրառող մարմինը հաշվի է առնում՝

1) նախկինում նման խախտման համար այլ անձանց նկատմամբ կիրառված տուգանքի չափը;
2) խախտման բնույթը (դիտավորության առկայությունը, անտարբերությունը կամ անփութությունը);
3) խախտմամբ այլ անձանց հասցված վնասի առկայությունը և դրա չափը;
4) անհիմն հարստացման աստիճանը՝ հաշվի առնելով այլ անձանց տրված հատուցումները;
5) նախկինում նույն անձի կողմից նույն կամ այլ խախտում թույլ տալը և դրա համար պատասխանատվության ենթարկվելը, ինչպես նաև նախկին պատասխանատվության չափն ու բնույթը;

6) նույն և այլ անձանց կողմից նման խախտումները հետագայում բացառելու անհրաժեշտության աստիճանը:

4. Սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի խախտման դեպքում հաշվի օպերատորից կամ հաշվի օպերատորի խախտում կատարած համապատասխան աշխատակցից գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր դեպքի համար նվազագույն աշխատավարձի 3000-ապատիկի չափով:

5. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի խախտման դեպքում մասնակիցների ռեեստր վարողից գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր դեպքի համար նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկի չափով:

6. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի, հաշվի օպերատորի և մասնակիցների ռեեստրը վարողի նկատմամբ նշանակված տուգանքները գանձվում են վերջիններիս (իրավաբանական անձի) միջոցներից, բացառությամբ եթե հաշվի օպերատորը պետական մարմին է: Եթե հաշվի օպերատորը պետական մարմին է, ապա տուգանքը գանձվում է խախտումը կատարող համապատասխան աշխատակցից:

7. Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի որոշմամբ այն դեպքում, երբ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն, հաշվի օպերատորը կամ մասնակիցների ռեեստրը վարողը համաձայն չեն տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ:

8. Սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված խախտման դեպքում, գանձվող գումարը փոխանցվում է մասնակցի անհատական հաշվին, ով վնասներ է կրել այդ իրավախախտումից: Եթե թույլ է տրվել սույն հոդվածի 3-րդ, 4-րդ կամ 5-րդ մասերում նախատեսված խախտումները, ապա գանձվող տուգանքի գումարը փոխանցվում է պետական բյուջե:

**Հոդված 78. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարներին որակավորման վկայականից զրկելը**

1. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարը կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ զրկվել որակավորման վկայականից, եթե՝

1) միտումնավոր կերպով խախտել է օրենքները կամ այլ իրավական ակտերի պահանջները,

2) պաշտոնավարման ընթացքում կատարել է չհիմնավորված և (կամ) վտանգավոր գործողություն,

3) խոչընդոտել է վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ կենտրոնական բանկի կամ նրա ծառայողների գործողություններին,

4) կատարել է այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով մասնակիցը կրել է ֆինանսական կամ այլ վնաս,

5) գործունեության ընթացքում կատարել է անձնական շահերից բխող այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործունեություն, որը հակասում է մասնակիցների իրավունքներին կամ օրինական շահերին,

6) իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում դրսևորել է անազնիվ կամ անբարեխիղճ վարքագիծ,

7) կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակավորման համապատասխանության չափանիշներին,

8) չի կատարել կենտրոնական բանկի կողմից տրված հանձնարարականը:

9) օրենքով նախատեսված այլ դեպքերում

2. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, պահառուի և մասնակիցների ռեեստրը վարողի ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու պահից այդ անձին սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով, ինչպես նաև վերահսկվողի ներքին իրավական ակտերով սահմանված լիազորությունները դադարում են:

**Հոդված 79. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելը**

1. Թույլտվությունն կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե առկա են սույն օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, օրենքով սահմանված այլ դեպքերում, ինչպես նաև այն դեպքում, երբ մեկ օրացուցային տարում կիրառվել է 2 և ավելի անգամ 77-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը և կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչը կամ պահառուն կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի վերացրել դրանք կամ չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դրանք վերացնելու համար:

2. Կենտրոնական բանկը իրավունք ունի ուժը կորցրած ճանաչել կենսաթոշակային ֆոնդի կառավարչին կամ պահառուին տրված թույլտվությունը, եթե պարզվում է, որ թույլտվություն ստանալու համար ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տվյալներ:

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի գործունեության թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ պահառուի թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում բացառապես սույն օրենքով սահմանված կարգով: Այլ օրենքներով թույլտվության ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ այլ դրույթներ սահմանված լինելու դեպքում գործում են սույն օրենքի դրույթները:

**Հոդված 80. Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը հրապարակելը և դրա իրավական հետևանքները**

1. Սույն օրենքի 79-րդ հոդվածով նախատեսված հիմքերով թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին կենտրոնական բանկի խորհրդի որոշումն անմիջապես հրապարակվում է: Նշված որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

2. Թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու որոշման ուժի մեջ մտնելու պահից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը կամ պահառուն առնվազն 10 տարով զրկվում են կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի կենսաթոշակային ֆոնդի կառավարման և ակտիվների պահառության գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ օրենքով նախատեսված գործարքների, որոնք ուղղված են նրա ստանձնածպարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը եւ դրանց վերջնական բաշխմանը):

3. Թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին կենտրոնական բանկի խորհրդի որոշման պատճենն այն ընդունվելուց հետո` եռօրյա ժամկետում, տրամադրվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և պահառուին: Թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու մասին կենտրոնական բանկի խորհրդի որոշման բողոքարկումը դատարան չի կասեցնում այդ որոշման գործողությունը գործի ողջ դատական քննության ընթացքում:

**Հոդված 81. Վեճերի լուծումը**

1. Սույն օրենքի համաձայն մասնակցի կամ շահառուի կողմից կենսաթոշակային հաշվի վերաբերյալ ցանկացած բողոք կամ հարցում գրավոր ներկայացվում է կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող լիազոր մարմին, որը բողոքը կամ հարցումը քննում է առավելագույնը 30 օրվա ընթացքում և մասնակցին կամ շահագրգիռ անձին գրավոր հայտնում է իր որոշման և որոշման համար հիմք հանդիսացած հիմնավորումների մասին:

2. Մասնակիցը կամ շահառուն կարող է վեճի կարգավորման հայց ներկայացնել ֆինանսական հաշտարարին` կուտակային վճարների հավաքագրում և անհատական հաշվառում իրականացնող լիազոր մարմնից պատասխանը ստանալուց կամ բողոքը կամ հարցումը ներկայացնելուց 30 օր հետո, «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

3. Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ մասնակցի կամ այլ շահագրգիռ անձի կողմից հայց ներկայացնելու դեպքում, երբ դատարանը գտնում է, որ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն կամ մասնակիցների ռեեստր վարողը պատասխանատվություն է կրում տեղի ունեցածի համար, ապա դատարանը մասնակիցների կամ շահառուների օգտին որոշում է`

1) վճարման ենթակա գումարը, գումարած վճարման ենթակա օրվանից սկսած մինչև փաստացի վճարման օրը հաշվարկվող տոկոսագումարները, և

2) պատճառված վնասները հատուցելու նպատակով հայցադիմումը ներկայացնելու և/կամ կատարված այլ դատական ծախսերը:

4. Այն դեպքում, երբ մասնակիցների ռեեստրը վարողը մասնակցի կենսաթոշակային հաշվից գումարներ է փոխանցում ապահովագրական ընկերությանն անուիտետ գնելու նպատակով, ապա նման գործառույթի հետ կապված ցանկացած վեճ կարգավորվում է հետևյալ կարգով. անուիտետի վճարման վերաբերյալ մասնակցի կամ շահառուի բողոքն առաջին հերթին ներկայացվում է ապահովագրական ընկերության ղեկավար մարմին: Ղեկավար մարմինը նման բողոքը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում քննում է բողոքը և մասնակցին կամ շահառուին գրավոր տեղեկացնում է իր որոշման և նման որոշման համար հիմք հանդիսացած հիմնավորումների

մասին: Մասնակիցը կամ վերջինիս լիազոր ներկայացուցիչն իրավունք ունի ներկա գտնվել հարցի քննությանը: Որոշման հետ չհամաձայնելու դեպքում մասնակիցը կամ շահառուն դիմում է իրավական պաշտպանության բոլոր հնարավոր միջոցներին, որոնք նախատեսված են «Ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

## Գլուխ 14
## Եզրափակիչ և անցումային դրույթներ

### Հոդված 82. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությունից:

2. Սույն օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարներ կատարելու պարտավորությանը վերաբերող դրույթները ուժի մեջ են մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

3. Պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակիցները մինչև 2011թ. հունվարի 1-ը պետք է կատարեն կենսաթոշակային ֆոնդի և ֆոնդի կառավարիչի ընտրություն, այլապես ընտրությունը կատարվում է մասնակիցների ռեեստրը վարողի կողմից ծրագրային մոդուլի միջոցով, սույն օրենքում նախատեսված կարգով:

### Հոդված 83. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակային ֆոնդերի փոփոխության, ինչպես նաև կենսաթոշակային ակտիվների ժառանգման վերաբերյալ դրույթներ ուժի մեջ են մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքով սահմանված կուտակված կենսաթոշակային ակտիվները կարող են կուտակային կենսաթոշակային համակարգից դուրս բերվել (այդ թվում՝ կենսաթոշակի տեսքով) 2012 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի իմաստով պահառուի և սույն օրենքի 22 հոդվածի 6-րդ մասով սահմանված գործառույթները մինչև կառավարության կողմից համապատասխան որոշում ընդունելը կիրականացվի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից: Կենսաթոշակային ֆոնդի բանկային հաշվի օգտագործում սույն մասում նշված ժամանակահատվածում իրականացվում է մասնակիցների ռեեստրը վարողի համաձայնությամբ: